

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012

առաջին կիսամյակ

**«Ֆինանսական կայունության հաշվետվությունում» ներկայացված են
Չայաստանի ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող
հավանական ռիսկերի գնահատումը և ֆինանսական համակարգի՝ այդ
ռիսկերը չեզոքացնելու կարողությունը:**

**Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի և
ֆինանսական համակարգի վերլուծությունների վերաբերյալ առավել
մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է «ՀՀ ԿԲ տարեկան
հաշվետվություն», «Դրամավարկային քաղաքականության ծրագրի
կատարման հաշվետվություն»,**

**«ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը,
վերահսկողությունը» պարբերականներում:**

**Հաշվետվությունում օգտագործված են
15.07.2012 թ. դրությամբ առկա ցուցանիշները:**

Չայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոս՝ (374 10) 58 38 41
Ֆաքս՝ (374 10) 52 38 52
Ինտերնետային կայք՝ www.cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	7
1. Համաշխարհային տնտեսության զարգացումները	10
1.1. Մակրոտնտեսական միջավայր	10
1.2. Միջազգային ֆինանսական շուկաներ	14
1.3. Հարևան երկրների տնտեսական զարգացումները	16
2. Զարգացումները Հայաստանի մակրոտնտեսական միջավայրում	20
2.1. Մակրոտնտեսական զարգացումներ	20
2.2. Արտաքին առևտուր	23
2.3. Զուտ գործոնային եկամուտներ և մասնավոր տրանսֆերտներ	24
2.4. Տնային տնտեսությունների եկամուտներ և պարտքի բեռ	24
2.5. Անշարժ գույքի գներ	27
3. Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը	30
3.1. Դրամական և կապիտալի շուկաներ	30
3.2. Արժույթային շուկա	32
4. ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը	34
4.1. Առևտրային բանկեր	34
4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն	35
4.1.2. Վարկային ռիսկ	36
4.1.3. Իրացվելիության ռիսկ	38
4.1.4. Շուկայական ռիսկ	40
4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն	42
4.2. Վարկային կազմակերպություններ	44
4.3. Ապահովագրական ընկերություններ	45
4.4. Արժեթղթերի շուկայի մասնակիցներ	48
4.5. Ֆինանսական համակարգի այլ մասնակիցներ	49
5. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառույցներում	51
5.1. ՀՀ միջբանկային վճարումներ	51
5.2. Ավանդների երաշխավորում	54
5.4. Վարկային ռեզիստր և ԱՔՌԱ վարկային բյուրո	55
Գծապատկերներ	59
Աղյուսակներ	62
Օգտագործված հապավումներ	62

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, երբ ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և շուկայի ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը:

Ֆինանսական կայունությունը սահմանելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական անկայունություն կարող է առաջանալ ինչպես ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այնպես էլ երկրի ներսում ու համաշխարհային տնտեսությունում անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների, խոշոր փոխառումների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության կամ ենթակառուցվածքների փոփոխությունների հետևանքով:

Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի հիմնական աղբյուրների, ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտում և համապատասխան քաղաքականության իրականացում:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի *Ֆինանսական կայունության հաշվետվությունը* պատրաստվում է կիսամյակային պարբերականությամբ և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերի, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրելու այն ռիսկերի, իրադարձությունների վրա, որոնք կարող են վտանգել ՀՀ ֆինանսական կայունությունը, ինչպես նաև նախաձեռնել այդ ռիսկերի կառավարման, նվազեցման վերաբերյալ քննարկումներ:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովումը, որը փոխկապակցված է Կենտրոնական բանկի հիմնական գների կայունության ապահովման խնդրի հետ: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է եականորեն խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը: Միևնույն ժամանակ, դրամավարկային և մակրոտնտեսական կայունությունը նպաստում է ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգին կարևոր դեր է հատկացված ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդ կերպ նպաստելով ընդհանուր տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող փոփոխությունների և տատանումների վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ֆինանսական կայունության շարունակական մոնիթորինգ (մշտադիտարկում), վերլուծություն: Հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել ներքին տնտեսությունում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում և բուն ֆինանսական համակարգում: Այս առումով՝ ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն նախապայմաններն են.

- կայուն զարգացող ներքին և արտաքին մակրոտնտեսական միջավայրը, որում տնային տնտեսությունները և ձեռնարկությունները բավականաչափ վարկունակ կլինեն,
- կայուն և արդյունավետ ֆինանսական համակարգը, որի ռիսկերը կլինեն խելամիտ ու կառավարելի սահմաններում,
- գործունակ ֆինանսական ենթակառուցվածքները, որոնց անխափան գործունեությունը չի խոչընդոտի ֆինանսական համակարգի գործառույթների իրականացմանը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը խոչընդոտող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են 5 հիմնական ուղղություններով.

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցվող ռիսկեր,

- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական հաստատություններից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական ենթակառույցներից ածանցվող ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում դրսևորված ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա: Ընդ որում՝ ՖԿ հաշվետվությունում հիմնականում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները, քանի որ ՖՀ ակտիվների ավելի քան 90%-ը կազմում են առևտրային բանկերի ակտիվները, և հետևաբար բանկային համակարգի իրավիճակով են պայմանավորվում ընդհանուր ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները:

ՀԱՍԱՌՈՏԱԳԻՐ

Կիսամյակի ընթացքում Հայաստանի ֆինանսական կայունությունը պահպանվել է բավարար մակարդակի վրա, թեև ֆինանսական համակարգում նախորդ տարի դրսևորված ռիսկերը պահպանվել են, և հետագա զարգացումների հետ կապված անորոշությունները դարձել են առավել ընդգծված:

Արդյունաբերական նշանակության հունքային ապրանքատեսակների միջին գների պահպանումը, ինչպես նաև տրանսֆերտների ներհոսքի և ներքին պահանջարկի վերականգնումը նպաստել են ՀՆԱ աճին: Միևնույն ժամանակ, ֆինանսական հատվածում բանկային համակարգը շարունակել է վարկավորման աճը:

Համաշխարհային տնտեսության աճի վերականգնումը շարունակվել է, չնայած բարձր են եղել տնտեսական աճի՝ դանդաղման ուղղությամբ ռիսկերը: Ջարգացած երկրներում պահպանվել են պետական և մասնավոր պարտքի բեռի բարձր մակարդակները, որոնք սահմանափակում են պետական միջամտության հնարավորությունները, համախառն պահանջարկի աճը, տնտեսության հետագա աշխուժացումը: Այս բարդ իրավիճակում կարևորվում են բոլոր պետությունների կողմից խիստ փոխհամաձայնեցված քաղաքականությունների իրականացումը, ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության բարեփոխումների միասնական մոտեցումների կիրառումը: Արդյունաբերական և պարենային ապրանքների գների՝ երկրորդ եռամսյակում արձանագրված նվազումը գնաճի զսպման խնդիրը որոշակիորեն դուրս են մղել զարգացած և զարգացող երկրների ուշադրությունից՝ առանցքային դարձնելով հետագա տնտեսական աճի ապահովումը: ՀՀ հիմնական գործընկեր երկրներում՝ Ռուսաստանում, Եվրոմիության որոշ երկրներում, տնտեսական վերականգնումը չի դանդաղել, ինչը դրական է անդրադարձել ՀՀ տնտեսության վրա:

Համաշխարհային անկայուն տնտեսական աճի և միջազգային այլ զարգացումների ներքո ՀՀ-ում արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի, արտաքին ապրանքաշրջանառության աճ: Նշված զարգացումները նպաստել են ֆինանսական կայունության ամրապնդմանը (մանրամասն տե՛ս «Համաշխարհային տնտեսության զարգացումները» բաժնում):

Ըստ ԿԲ գնահատումների՝ 2012 թ. առաջին կիսամյակի ՀՀ տնտեսական աճը եղել է 5.4 - 5.7% միջակայքում: Աճ գնահատվել է տնտեսության բոլոր ճյուղերում, այդ թվում և շինարարությունում, որտեղ արդեն իսկ արձանագրվել է բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճ:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում, թույլ գնաճային միջավայրի պահպանման պայմաններում, ԿԲ-ն անփոփոխ է թողել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Արտաքին գնաճային ճնշումների չեզոքացման, գյուղատնտեսության ճյուղի բարձր աճի պարագայում գյուղմթերքների գների աճի տեմպի նվազման արդյունքում կիսամյակի վերջին գնաճի մակարդակը գտնվել է թիրախային միջակայքում: Հունիս ամսվա տվյալներով՝ 12-ամսյա գնաճը կազմել է 0.7% (մանրամասն տե՛ս «Ձարգացումները ՀՀ նակրոտնտեսական միջավայրում» բաժնում):

ՀՀ բանկային համակարգը ամբողջ կիսամյակի ընթացքում պահպանել է նորմատիվային պահանջներից բարձր կապիտալի համարժեքության, իրացվելիության ցուցանիշներ, կառավարելի շուկայական ռիսկեր: Բանկային համակարգի շահույթը կիսամյակային տվյալներով կազմել է 15.4 մլրդ դրամ, ընդ որում՝ շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 1.5%, իսկ ըստ կապիտալի՝ 8.4%:

Ֆինանսական համակարգում առկա ռիսկերը ամբողջ կիսամյակի ընթացքում եղել են կառավարելի շրջանակներում՝ ֆինանսական կայունության առումով խոցելիություններ չառաջացնելով: Ընդհանուր առմամբ, ներքին տնտեսության զարգացումները նույնպես բարենպաստ են եղել ֆինանսական կայունության տեսանկյունից (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը» և «Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքում» բաժիններում):

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2012 թվականի առաջին կիսամյակի միջազգային տնտեսական զարգացումները հիմնականում պայմանավորված են եղել Եվրոգոտու պարտքային խնդիրների պահպանմամբ: Կիսամյակի սկիզբը նշանավորվել է մի շարք երկրներում իրավիճակի սրմամբ և վարկանիշերի նվազեցմամբ: Թեև հաջորդող ամիսներին նկատվել են որոշակի դրական զարգացումներ, մասնավորապես՝ ԱՄՆ տնտեսական աճի՝ կանխատեսվածից բարձր մակարդակ, Եվրոպական երկրների խնդիրներին ուղղված պետական միջոցառումների արդյունավետության որոշակի բարելավում, այնուամենայնիվ, կիսամյակն ավարտվել է ապագայի նկատմամբ անորոշության բարձր աստիճանով:

Համաշխարհային տնտեսության զարգացումները առաջին երկու եռամսյակներում էապես տարբերվել են: ԱՄՆ գնահատումների համաձայն՝ համաշխարհային տնտեսական աճը առաջին եռամսյակում տ/տ կազմել է 3.6%, ինչը հիմնականում պայմանավորել են այնպիսի ժամանակավոր գործոններ, ինչպիսիք են ֆինանսավորման պայմանների որոշակի թուլացումը և ԵԿԲ կողմից իրականացված երկարաժամկետ վերաֆինանսավորման գործարքների արդյունքում վստահության վերականգնումը: Առաջին եռամսյակում, արդյունաբերության աճին զուգընթաց, ավելացել են նաև համաշխարհային առևտրի ծավալները, ինչն առավել նպաստավոր է եղել արտահանմանը հակված տնտեսությունների, մասնավորապես՝ Գերմանիայի և ասիական երկրների համար: Զարգացումները երկրորդ եռամսյակում առավել բացասական ուղղվածություն են ունեցել: Զբաղվածության վերականգնումը նկատելիորեն դանդաղել է, գործազրկության մակարդակը մի շարք զարգացած երկրներում շարունակել է մնալ բարձր, իսկ Եվրոգոտու երկրների պարտքային հիմնախնդիրները՝ չլուծված:

2012 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատականի վերանայումները ԱՄՅ կողմից

Ցուցանիշ (տնտեսական աճ)	30.06.11 դրությամբ 2011 թ. կանխատեսում	30.09.11 դրությամբ 2011 թ. կանխատեսում	30.01.12 դրությամբ 2011 թ. գնահատական	30.01.12 դրությամբ 2012 թ. կանխատեսում	30.04.12 դրությամբ 2012 թ. կանխատեսում	30.06.12 դրությամբ 2012 թ. կանխատեսում
Համաշխարհային տնտեսություն	4.3	4	3.8	3.3	3.6	3.5
Զարգացած երկրներ	2.2	1.6	1.6	1.2	1.4	1.4
ԱՄՆ	2.5	1.5	1.8	1.8	2.1	2.0
Եվրոգոտի	2	1.6	1.6	-0.5	-0.3	-0.3
Զարգացող երկրներ	6.6	6.4	6.2	5.4	5.7	5.6
ԱՊՀ	5.1	4.6	4.5	3.7	4.1	4.1
Ռուսաստան	4.8	4.3	4.1	3.3	4.0	4.0
Չինաստան	9.6	9.5	9.2	8.2	8.2	8.0

Աղբյուրը՝ ԱՄՅ:

Միջազգային կազմակերպությունների կանխատեսումների և վերլուծությունների համաձայն՝ համաշխարհային տնտեսության աճը դանդաղ կլինի նաև 2012 թ. երկրորդ կիսամյակում:

Կիսամյակի վերջին փոքր-ինչ նվազեցվել են 2012 թ., ինչպես նաև 2013 թ. համար համաշխարհային տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշները՝ հաշվի առնելով առկա կառուցվածքային հիմնախնդիրները: Մասնավորապես՝ 2012 թ. համաշխարհային տնտեսական աճը ԱՄՆ¹-ն կանխատեսել է 3.5%, իսկ 2013 թվականի համար կանխատեսված համապատասխան ցուցանիշը 4.1%-ից նվազեցրել է մինչև 3.9%: Միևնույն ժամանակ, Համաշխարհային բանկի կանխատեսումները առավել պահպանողական են՝ 2.5% տնտեսական աճ 2012 թ. համար և 3.1%՝ 2013 թ. համար:

2012 թ. ԱՄՆ տնտեսական աճը ԱՄՆ-ն զնահատել է 2.0%, իսկ Եվրոգոտու համար նախանշվում է տնտեսական անկում՝ -0.3%: Ըստ կանխատեսումների՝ 2013 թ. ԱՄՆ տնտեսական աճը փոքր-ինչ ավելի բարձր կլինի, իսկ Եվրոգոտում արդեն կարձանագրվի փոքր տնտեսական աճ:


2012 թ. սկզբից տնտեսական զարգացումները բացասական են եղել և հանգեցրել են միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից մեծ թվով զարգացած երկրների վարկանիշերի նվազեցմանը, որին հետևել է նաև Եվրոպայի ֆինանսական կայունության հիմնադրամի վարկանիշի իջեցումը մեկ մակարդակով: Սպասումները որոշակիորեն բարելավվել են, երբ որոշում է կայացվել մեծացնել Եվրոգոտու երկրների պարտքային ճգնաժամի հաղթահարման համար նախատեսված ֆինանսավորման հիմնադրամի ծավալը, ինչպես նաև պարզ է դարձել, որ ԱՄՆ որոշ մակրոտնտեսական ցուցանիշներ գերազանցել են սպասումները:

Կիսամյակի ընթացքում թույլ տնտեսական աճը ինչպես պատճառ, այնպես էլ հետևանք է եղել մի շարք զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների և մեկ այլ խումբ երկրներում բյուջետային դժվարությունների համար: Պարտքային խնդիրների հետ կապված խառնաշփոթի կենտրոնում շարունակել է մնալ Եվրոգոտին, որտեղ, Հունաստանի հիմնախնդիրներից զատ, արդեն իսկ ահազանգող են դարձել Իսպանիայի բանկային համակարգի դժվարությունները: Եվրոգոտու երկրների կառավարությունների ձեռնարկած բազմաթիվ միջոցները՝ ուղղված խնդրահարույց երկրներում իրավիճակը շտկելուն, չնայած տարեսկզբին որոշակի կարճաժամկետ դրական ազդեցություն են ունեցել, սակայն թերևս բավարար չէին, ինչը ֆինանսական շուկաներում առաջ է բերել անհանգստությունների և բացասական սպասումների նոր ալիքներ (մանրամասն տես «Միջազգային ֆինանսական շուկաներ» ենթաբաժնում):

Գործազրկությունը առաջին կիսամյակի ընթացքում համաշխարհային տնտեսությունում պահպանվել է բարձր մակարդակի վրա (մոտ 8.0 տոկոս)՝ պայմանավորված տնտեսական դանդաղ վերականգնմամբ, և իր հերթին ռիսկ հանդիսացել հետագա տարիների պոտենցիալ ՀՆԱ-ի համար: Անհանգստացնող է ինչպես երիտասարդ աշխատուժի գործազրկությունը, այնպես էլ արդեն երկար ժամանակ գործազուրկ աշխատուժի՝ մասնագիտորեն «հնանալու» խնդիրը:


¹ Այս և հաջորդ գծապատկերներում աստղանիշով նշված ցուցանիշները ԱՄՆ գնահատումներն են (2012 թ. հուլիս):
 ԱՄՆ կանխատեսումները՝ ըստ «World economic outlook update» պարբերականի, 2012 հուլիս:

Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների




Աղբյուրը՝ ԱՄՆ:

Գործազրկության շարժը զարգացած երկրներում




Աղբյուրը՝ ՄԱԿ:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի և Եվրոգոտու երկրների ընթացիկ հաշիվները



Աղբյուրը՝ ԱՄՖ:

Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը



Աղբյուրը՝ ԱՄՖ:

2012 թ. գործազրկության մակարդակը զարգացած երկրներում դեռևս մտահոգիչ է: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում նոր աշխատատեղերի ստեղծման միտումը նվազել է փետրվար ամսից սկսած, իսկ ապրիլ-մայիսին այդ ցուցանիշը տարեսկզբի համեմատ կրկնակի նվազել է:

Կանխատեսումների համաձայն՝ տարվա ընթացքում գործազրկության մակարդակը էականորեն չի բարելավվի՝ պայմանավորված նաև պետական ծախսերի կրճատման մտավախություններով: Եվրոգոտում ևս գործազրկությունը պատմականորեն բարձր մակարդակի վրա է գտնվում՝ մոտ 10.9%, և որոշ վերլուծաբանների կարծիքով ընթացիկ տարում այն կարող է հասնել ընդհուպ մինչև 11.5%-ի: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Գերմանիայում գործազրկությունը պատմականորեն ցածր՝ 6.8% մակարդակ ունի:

Համաշխարհային տնտեսության վերականգնման անորոշությունները պայմանավորել են նաև համաշխարհային առևտրի աճի տեմպերի նվազումը, որը, ըստ գնահատումների, էապես կզիջի 2011 թ. համապատասխան ցուցանիշին: Ընդ որում՝ նվազման միտումը ակնառու էր դեռևս նախորդ տարի:

Ապրանքների առևտրի աճը 2012 թ. կկազմի 3.8% (նախորդ տարի՝ 5.9%): Առկա կանխատեսումների համաձայն՝ համաշխարհային առևտրի ցածր աճի տեմպը կշարունակվի նաև հաջորդ տարիներին՝ հիմնականում պայմանավորված զարգացած երկրների թույլ տնտեսական աճով: Զարգացող երկրները թեև հետճգնաժամային շրջանում առավել դիմացկուն էին ճգնաժամի հետևանքների նկատմամբ, և նրանց կարևորությունը համաշխարհային առևտրում շարունակել էր զգալի լինել՝ ընթացիկ տարում ևս առևտրի աճի տեմպի դանդաղում կարձանագրեն: Համաձայն Առևտրի միջազգային կազմակերպության և Եվրոպական կոմիտեի զեկույցների՝ ճգնաժամից հետո էապես աճել է հովանավորչությունը, ներդրվել են հովանավորչական նոր գործիքներ, ինչն իր հերթին խոչընդոտում է առևտրի աճի տեմպի վերականգնմանը: 2012 թ. ընթացքում որոշակի տեղաշարժ է նկատվել համաշխարհային առևտրի հիմնական մասնակից երկրների ընթացիկ հաշիվների կառուցվածքում: Մասնավորապես, Չինաստանը ԱՄՆ-ի հետ առևտրում թեև շարունակում է պահպանել հսկայական դրական մնացորդ, նրա ընթացիկ հաշվի ընդհանուր ավելցուկը նկատելիորեն կրճատվել է, իսկ փետրվարին նույնիսկ գրանցվել է պակասուրդ: Շարունակում է ընթացիկ հաշվի պակասուրդ ունենալ նաև Ճապոնիան, որը մինչ ճգնաժամը առևտրային հաշվեկշռի դրական մնացորդ ունեցող երկիր էր համարվում:

Կիսամյակի ընթացքում հիմնական բորսայական ապրանքատեսակների շուկաներում զարգացումները և միտումները տարաբնույթ են եղել: Չնայած տարեսկզբի համեմատաբար կտրուկ մեկնարկին, կիսամյակի ընթացքում հիմնական ապրանքատեսակների գները փոխեցին վարքագիծը՝ հետևելով ընթացիկ միտումներին. Եվրոգոտու ֆինանսական կայունության շուրջ մտավախություններ, ԱՄՆ ոչ միանշանակ մակրոտնտեսական ցուցանիշներ, մի շարք զարգացող երկրների (Չինաստան, Բրազիլիա, Հնդկաստան) տնտեսական վերականգնման ակնհայտ դանդաղման նշաններ: Կանխատեսվում է, որ հիմնական ապրանքատեսակների միջին գների ցածր մակարդակը 2012 թ. ընթացքում կպահպանվի՝ առավելապես պայմանավորված սպառման ցածր աճով:

«Բրենթ» տեսակի նավթի միջին գինը 2012 թ. առաջին կիսամյակում կազմել է 113.7 ԱՄՆ դոլար՝ մեկ բարելի դիմաց՝ գրեթե չփոփոխվելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Նավթի միջազգային գները նվազել են 2012 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում՝ մինչև 90 ԱՄՆ դոլար՝ մեկ բարելի դիմաց, ինչը մարտի բարձրակետից ցածր էր 25%-ով: Նվազման հիմնական պատճառը թույլ պահանջարկն էր, Իրանի առաջարկի հետ կապված քաղաքական լարվածության որոշակի թուլացումն ու ՕՊԵԿ անդամ երկրների՝ սահմանված քվոտաներից ավելի շատ արդյունահանումը: Միևնույն ժամանակ, համաշխարհային պահանջարկի չափավոր աճի պայմաններում նավթամթերքի շուկայում կարճաժամկետում ակնկալվում են փոքր գնաճային միտումներ, իսկ, ընդհանուր առմամբ, նավթի գները զգայուն կլինեն աշխարհաքաղաքական զարգացումների նկատմամբ:

Արդյունաբերական մետաղների գները, ի տարբերություն նախորդ տարեվերջի նվազման, բավականին բարձր աճ արձանագրեցին կիսամյակի սկզբին, սակայն երկրորդ եռամսյակի ընթացքում նահանջեցին՝ մեծ մասամբ պայմանավորված ԱՄՆ-ի և Չինաստանի՝ սպասվածից թույլ տնտեսական ակտիվությամբ: Չինաստանի և զարգացող մյուս երկրների տնտեսական ակտիվության նվազման սպասումներին զուգընթաց, ակնկալվում է նաև արդյունաբերական մետաղների գների նվազման միտման պահպանում 2012 թ. ընթացքում:

2012 թ. առաջին կիսամյակի վերջին պղնձի միջին գինը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 14.0%-ով՝ կազմելով 8087.1 ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի դիմաց: Մոլիբդենի միջին գինը նախորդ տարվա միջինի համեմատ նվազել է ավելի քան 18%-ով:


Պարենային ապրանքատեսակների գները թեև առավել դիմակայուն են եղել ֆինանսական տատանումների նկատմամբ, այնուամենայնիվ նույնպես արձանագրել են որոշակի նվազում: Կիսամյակի վերջին, տարեվերջի համեմատ, հացահատիկի գինը նվազել է մոտ 8%-ով՝ կազմելով 7.5 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց, որը պատմականորեն դեռևս բարձր մակարդակ է համարվում:

2012 - 2013 թթ. համար, պայմանավորված հիմնական արտահանող երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի վատ եղանակային պայմաններով, հացահատիկի գների աճ է կանխատեսվում, որն արդեն իսկ զգալի է ընթացիկ տարում:


Միջազգային ֆինանսական շուկաներում ձևավորված անորոշություններն ու բացասական տրամադրվածությունները կիսամյակի ընթացքում նպաստել են ոսկու գների բարձր մակարդակի պահպանմանը, թեև նոր կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: 2012 թ. առաջին կիսամյակի ավարտին ոսկու միջին գինը կազմել է 1651.5 ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14%-ով, թեև տարեվերջի համեմատ գրեթե չի փոփոխվել:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում հիմնական ապրանքատեսակների գների նվազող վարքագծի պայմաններում մեղմվել են նաև գնաճային ճնշումները զարգացած և զարգացող երկրներում: Եվրոգոտում նախորդ տարվա 2.7% գնաճի փոխարեն 2012 թ. համար կանխատեսվում է 2.3 - 2.5%, իսկ 2013 թ. համար՝ 1 - 2.2% գնաճ: Գնաճի նվազող միտումի կանխատեսման հիմքում հարկերի բարձրացման ազդեցության նվազումն է և նավթի գնի նվազման սպասումները: Տարեկան գնաճի ցուցա-


Նավթի («բրենթ» տեսակի) գները
(ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց)




Պղնձի գները
(ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)




Մոլիբդենի գները
(1000 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)



Հացահատիկի գները
(ԱՄՆ դոլար՝ 1 բուշելի դիմաց)




Ոսկու գները
(ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց)



Աղբյուրը՝ Bloomberg:

Գնաճը մի շարք երկրներում




Գնաճը մի շարք երկրներում 2.8%: Մինչև տարեվերջը կանխատեսվում է 2.5 - 2.8% գնաճ: ԱՄՆ-ում ևս հունիսին արձանագրվել է 1.7% գնաճ, մինչդեռ 2011 թվականի տարեվերջի տվյալներով գնաճի մակարդակը կազմել էր 3.2%: Ընդհանուր առմամբ, 2012 թ. զարգացած երկրների համար ԱՄՆ-ն կանխատեսում է 2.0%, իսկ զարգացող երկրների համար՝ 6.3% գնաճ (Նախորդ տարի, համապատասխանաբար՝ 2.7% և 7.2%):

Գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը շարունակել են վարել մեղմ դրամավարկային քաղաքականություն՝ բարձր գործազրկության, թույլ տնտեսական աճի և գնաճային ճնշումների թուլացման պայմաններում: ԵԿԲ-ն հուլիսին նույնիսկ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25-ով՝ սահմանելով պատմական ամենացածր՝ 0.75% մակարդակ: Անվտոմիս են թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը Դաշնային պահուստային համակարգը՝ 0.25%, և Անգլիայի բանկը՝ 0.5%: Նման զարգացումների պայմաններում շուկայի մասնակիցների կողմից կարճաժամկետում տոկոսադրույքի բարձրացում չի ակնկալվում:

Տարվա ընթացքում համաշխարհային մակրոտնտեսական զարգացումները, ըստ էության, մեծ ռիսկեր չեն ստեղծել ներքին տնտեսության և ֆինանսական կայունության համար, ինչը մանրամասն նկարագրված է «Մակրոտնտեսական զարգացումներ» ենթաբաժնում:

1.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ

10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը



2011 թ. վերջին եվրոպական երկրների կառավարությունների և միջազգային կառույցների ձեռնարկած համարձակ միջոցառումները բանկերին և պարտապան պետություններին հնարավորություն տվեցին որոշակի ժամանակ շահել՝ վերականգնելու համար իրենց հաշվեկշիռները: ԵԿԲ-ի երեք տարի ժամկետայնություն ունեցող վերաֆինանսավորման գործարքները որոշակիորեն թուլացրին ֆինանսավորման անհասանելիության պատճառով առաջացած լարվածությունը և տարբեր ակտիվների շուկաներում կտրուկ աճերի պատճառ դարձան: Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսության հետագա զարգացումների աճող անորոշության պայմաններում, նշված դրական ազդեցությունը երկար չտևեց: Լարվածություններն էլ ավելի խորացան մայիսին՝ Հունաստանում ընտրությունների ոչ միանշանակ զարգացումների պայմաններում՝ վերջինիս կողմից Եվրոգոտին լքելու մտավախությունների, ինչպես նաև Իսպանիայի բանկային համակարգի կայունության վերաբերյալ աճող անհանգստությունների պատճառով: Իրավիճակը ֆինանսական շուկաներում առավել վատացավ մայիս-հունիսին, երբ սթրես-թեստավորման արդյունքները նմանվեցին, մինչև անգամ զիջեցին նախորդ տարվա նոյեմբերի ամենավատ ցուցանիշներին: Խոշոր ֆոնդային և արժույթային շուկաներում տատանումները հասան առավելագույն արժեքների, և մինչ այդ դրական զարգացումները զրոյացան՝ ինչն արտահայտվել է հիմնական երկրների պարտատոմսերի եկամտաբերության և բորսայական ինդեքսների վարքագծում: Համաշխարհային ընդգրկումով անորոշությունների բարձր մակարդակը հանգեցրել է ոչ ռիսկային ակտիվների, հիմնականում՝ պետական պարտատոմսերի պահանջարկի աճի,

իսկ բորսայական ինդեքսները դրսևորել են խիստ տատանողական վարքագիծ:

Եվրոգոտու խոցելի երկրների պետական պարտատոմսերի եկամտաբերությունը կտրուկ աճել է: Ու թեև երեք տարի ժամկետայնությամբ վերաֆինանսավորման գործարքները ստեղծել են այդ երկրների պարտատոմսերի նկատմամբ որոշակի պահանջարկ, սակայն հիմնական ճնշումները դրանց դրական ազդեցության նվազման ուղղությամբ էին: Կապիտալի «փախուստը» դեպի ավելի անվտանգ ակտիվներ հանգեցրել է ԱՄՆ-ի, Գերմանիայի, Շվեյցարիայի պարտատոմսերի եկամտաբերության նվազման, ինչպես նաև ԱՄՆ դոլարի փոխարժեքի՝ վերջին 20 ամիսների ընթացքում այլ արժույթների համեմատ ամենաբարձր արժեքին: Ցածր ռիսկայնության նկատառումներով պայմանավորված ֆինանսական միջոցների հոսքը հանգեցրել է նաև ճապոնիայի պարտատոմսերի՝ երբևէ արձանագրված ամենացածր եկամտաբերության, իսկ արժևորված իենն իր հերթին խոչընդոտել է տնտեսության արագ աճին:

Եվրոգոտում ստեղծված լարվածությունը և կառուցվածքային խնդիրների լուծման բացակայությունը ստիպել են վարկանշային կազմակերպություններին նվազեցնել մի շարք երկրների և բանկերի վարկանիշերը: Բանկերի վարկանիշերի նվազումը իր հերթին հանգեցրել է բանկերի համար ֆինանսավորման հասանելիության դժվարացման:


Պետական պարտքի և բյուջեի պակասուրդի խորացող հիմնախնդիրները զարգացող երկրներին պարտադրել են խստացնել հարկաբյուջետային քաղաքականությունը, ինչն իր հերթին որոշակի զսպողական ազդեցություն է ունեցել այդ երկրների տնտեսությունների արագ աճի վրա: Կիսամյակի ընթացքում, սակայն, դրամավարկային քաղաքականությունը հիմնական երկրներում շարունակել է լինել մեղմ, և հետագա խստացում կարճաժամկետ հեռանկարում չի կանխատեսվում:

ԵԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը պահպանել է նախկին 1% մակարդակում, իսկ հուլիսին արդեն իսկ նվազեցրել մինչև 0.75%: Մեղմ դրամավարկային քաղաքականություն են շարունակել իրականացնել Դաշնային պահուստային համակարգը և Անգլիայի բանկը: Համաշխարհային տնտեսության վերականգնման ներկա տեմպերի և առկա կառուցվածքային հիմնախնդիրների պայմաններում, առանցքային երկրներում կարճաժամկետ հեռանկարում տոկոսադրույքի բարձրացում չի ակնկալվում:

Բազային ցածր տոկոսադրույքները, համաշխարհային առումով ներդրումային թույլ պահանջարկը և ռիսկայնության բարձր մակարդակն էլ իրենց հերթին են ապահովել միջբանկային տոկոսադրույքների նվազող մակարդակ:


Կիսամյակի ընթացքում, Եվրոգոտու տնտեսությունների տատանողական զարգացումներին զուգընթաց, երկրների արժույթների վարքագիծը ևս տատանողական է եղել: ԱՄՆ դոլարը զգալի արժևորվել է Եվրոյի նկատմամբ՝ հիմնականում սկսած ապրիլ ամսից: Եվրոգոտում հիմնախնդիրների կառուցվածքային լուծումների բացակայությունը պայմանավորել է ներդրողների կողմնորոշումը դեպի պատմականորեն անվտանգ ակտիվներ հանդիսացող ԱՄՆ դոլար և ճապոնական իեն: Կիսամյակի վերջին ԱՄՆ դոլարը նկատելի արժևորվել է, ինչը պայմանավորվել է Եվրոպական երկրների խնդիրների հստակ լուծումների բացակայությամբ և ԱՄՆ մակրոտնտեսական դրական զարգացում-

Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը




Աղբյուրը՝ Bloomberg:

Միջբանկային տոկոսադրույքները




Աղբյուրը՝ Bloomberg:

ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի և ՄԲ ֆունտ ստեռլինգի նկատմամբ



Աղբյուրը՝ ԵԿԲ:

Բորսայական ինդեքսները



Աղբյուրը՝ Bloomberg:

ներով: Եվրոպական երկրների հիմնախնդիրները կիսամյակի ընթացքում հանգեցրել են արդեն իսկ զարգացող երկրների տնտեսությունների աճի դանդաղման, ինչի արդյունքում մի շարք առանցքային զարգացող երկրների (Չինաստան, Բրազիլիա, Հնդկաստան) արժույթներ սկսել են կրել արժեզրկման ճնշումներ:

Ջարգացած և զարգացող երկրների բորսայական ինդեքսները, տնտեսական փոփոխություններին համապատասխան, տարվա ընթացքում դրսևորել են տատանողական վարքագիծ. միջինում, սակայն, արձանագրվել է որոշակի նվազում, հատկապես երկրորդ եռամսյակի ընթացքում:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում մասնավոր կապիտալի ներհոսքը զարգացող երկրներ շարունակել է անկայուն մնալ և կրել Եվրոգոտու պարտքային ճգնաժամի զարգացումների ազդեցությունը: Ակնկալվում է, որ դեռևս նախորդ տարի արձանագրված ակնհայտ նվազումը կշարունակվի նաև 2012 թ. ընթացքում: Համաձայն Միջազգային ֆինանսների ինստիտուտի կանխատեսումների՝ 2012 թ. զուտ մասնավոր կապիտալի ներհոսքը զարգացող երկրներ, նախորդ տարվա համեմատ կնվազի 11.5%-ով՝ կազմելով 912 մլրդ ԱՄՆ դոլար:

1.3. ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն


2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում Ռուսաստանի Դաշնության տնտեսությունը տ/տ ապահովել է 4.4% տնտեսական աճ: Տնտեսական աճ արձանագրվել է տնտեսության բոլոր ճյուղերում, իսկ առավել արագ աճ գրանցել են շինարարության և առևտրի ճյուղերը՝ համապատասխանաբար 5.4% և 7.1%, թեև կիսամյակի վերջում նկատվել է նվազման միտում:

Իրական տնօրինվող եկամուտները կիսամյակի ընթացքում, ըստ գնահատումների, ավելացել են տ/տ 2.7%-ով, իսկ ներդրումները հիմնական կապիտալում նախորդ տարվա համեմատ ավելացել են 10.2%-ով:

Ըստ կիսամյակային արդյունքների՝ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 419.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 6.1%-ով: Արտահանման տ/տ աճը կիսամյակում կազմել է 7.2%, մինչդեռ ներմուծման աճը նույն ժամանակահատվածում կազմել է 4.4%: Առևտրային հաշվեկշռի մնացորդը շարունակել է դրական մնալ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.4%-ով:

Կիսամյակի ընթացքում ռուսական ռուբլու փոխարժեքի դինամիկան ունեցել է տարբեր միտումներ: Հունվար-ապրիլ ամիսներին արտաքին տնտեսական բարենպաստ միջավայրի պայմաններում մեծացել է ներքին շուկայում արտարժույթի առաջարկը, ինչը իր հերթին առաջ է բերել ռուսական ռուբլու արժևորման ճնշումներ: Մայիս-հունիս ամիսներին, էներգակիրների միջազգային գների նվազմանը և Եվրոգոտու պարտքային ճգնաժամի խորացմանը զուգընթաց, մեծացել է արտարժույթի նկատմամբ պահանջարկը՝ արդյունքում ձևավորելով ռուբլու արժեզրկման միտում:

Նավթի գնի և ՌԴ արտահանման միտումները



Աղբյուրը՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն:

2012 առաջին կիսամյակի ընթացքում, թեև դանդաղող տեմպերով, սակայն շարունակվել է կապիտալի զուտ արտահոսքը, որը, ըստ ՌԴ ԿԲ գնահատումների, տարվա առաջին հինգ ամիսներին կազմել է 46.5 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, նավթի միջազգային գների՝ 100 ԱՄՆ դոլար բազային սցենարի դեպքում ՌԴ կենտրոնական բանկը 2012 թ. համար կանխատեսում է 10.5 մլրդ ԱՄՆ դոլար կապիտալի զուտ արտահոսք: Կապիտալ հոսքերի դինամիկան մեծապես կախյալնաձևավորեն Չինաստանում տնտեսական աճի միտումները և Եվրոգոտու զարգացումները:

Գործազրկության մակարդակը նվազել է՝ կազմելով տնտեսապես ակտիվ բնակչության 5.5%-ը, և, միևնույն ժամանակ, բնակչության իրական տնօրինվող եկամուտների աճը ևս նկատելի է եղել: Ընդհանուր առմամբ՝ աշխատանքի շուկայում իրավիճակը կարելի է գնահատել որպես կայունացած, ինչին հիմնականում նպաստել են տնտեսության շարունակական վերականգնումը և զբաղվածությանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Տարվա առաջին կեսին արձանագրվել է գնաճի՝ ևս մեկ պատմական նվազագույն մակարդակ՝ 3.2% (նախորդ տարի՝ 5.0%):

Գնաճային թույլ միջավայրը և տնտեսական աճի ներկա մակարդակը հաշվի առնելով՝ Ռուսաստանի կենտրոնական բանկը կիսամյակի ընթացքում անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%:

Ֆինանսական հատվածում դրսևորվել են հետևյալ զարգացումները: Հունվար-մայիսին բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 3.8%-ով: Աճել են նաև վարկավորման ծավալները, մասնավորապես՝ իրավաբանական անձանց վարկավորումն ավելացել է 4.8%-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկավորումը՝ 14.7%-ով: Վատորակ վարկերի տեսակարար կշիռը նվազել է՝ կիսամյակի վերջին կազմելով 4.6% (2011 թ.՝ 3.9%): Ֆինանսական հաստատությունների համախառն շահույթը, ըստ 2012 թ. առաջին հինգ ամիսների արդյունքների, տ/տ աճել է 13.8%-ով:


Թուրքիա

2012 թ. առաջին եռամսյակում Թուրքիայի տնտեսական աճի ցուցանիշը կազմել է 3.2%, որը ամենացածրն է 2009 թ-ից ի վեր: Ցածր տնտեսական աճի ցուցանիշը բացատրվում է հիմնական գործընկեր համարվող Եվրոպական երկրների հիմնախնդիրներով: Տնտեսական աճին առավել մեծ նպաստում է ունեցել ներքին պահանջարկի աճը: Առաջին հինգ ամիսներին ապրանքների և ծառայությունների արտահանման տ/տ աճը կազմել է 11.1%, իսկ ներմուծումը նվազել է 1.5%-ով, արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը շարունակել է բարելավվել՝ կազմելով 27.1 մլրդ ԱՄՆ դոլար:

Աշխատանքի շուկայում զարգացումները դրական են եղել. 2012 թ. ապրիլի դրությամբ գործազրկության մակարդակը ընդհուպ մոտեցել է նախաճգնաժամային մակարդակին՝ կազմելով 9.0%:

Համաշխարհային տնտեսության զարգացումների և վճարային հաշվեկշռի հոսքերի պայմաններում դրսևորվել են թուրքա-

Ռուսական ռուբլու միջին ամսական փոխարժեքը



Աղբյուրը՝ ՌԴ ֆինանսների նախարարություն:

կան լիրայի արժևորման միտումներ. թուրքական լիրայի միջին անվանական փոխարժեքը առաջին կիսամյակի տվյալներով տ/տ արժևորվել է 3.7%-ով:

2012 թ. առաջին կիսամյակը բնութագրվել է նաև բարձր գնաճային միջավայրի առկայությամբ, մասնավորապես՝ 12-ամսյա գնաճը կազմել է 8.9%, ընդ որում՝ թիրախային ցուցանիշը սահմանվել է 5.0%: Բարձր գնաճային ճնշումների ներքո Թուրքիայի կենտրոնական բանկը տարվա ընթացքում վարել է խիստ դրամավարկային քաղաքականություն՝ ԴԲ տոկոսադրույքը պահպանելով 5.75% մակարդակում:

Առաջին կիսամյակի տվյալներով՝ արձանագրվել է բանկային համակարգի կողմից վարկավորման 9.7% աճ՝ հիմնականում ի հաշիվ բիզնեսի վարկավորման: Միաժամանակ, չաշխատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում չի փոխվել՝ կազմելով 2.7%: 2012 թ. առաջին եռամսյակի տվյալներով՝ բանկային համակարգի շահութաբերությունը բնութագրող ցուցանիշները աճել են, մասնավորապես՝ շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 2.5%, իսկ ըստ կապիտալի՝ 20.5%:

Վրաստան

Ըստ նախնական տվյալների՝ Վրաստանի տնտեսությունում առաջին եռամսյակի տվյալներով արձանագրվել է 6.8% իրական աճ:

Արտաքին առևտուրը բավականին պասիվ է եղել. առաջին եռամսյակում արձանագրվել է արտահանման տ/տ 0.8% նվազում, իսկ ներմուծման տարեկան աճը կազմել է 2.4%, որի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 9.7%-ով, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը՝ 2.5%-ով՝ կազմելով 384.3 մլն ԱՄՆ դոլար:


Վրաստանի տնտեսության վերականգնմամբ պայմանավորված՝ շարունակել է ավելանալ ՕՈՒՆ-երի ներհոսքը. առաջին եռամսյակում այն կազմել է 269.46 մլն ԱՄՆ դոլար՝ տ/տ ավելանալով 53.7%-ով: Առաջին կիսամյակում ավելացել է նաև արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքը՝ 629.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 6.3%-ով: Ըստ կիսամյակային արդյունքների՝ արտարժույթային նշված հոսքերի պայմաններում միջին հաշվով գրանցվել է վրացական լարիի 0.5% արժևորում:

2012 թ. 1-ին կիսամյակի միջին գնաճը Վրաստանում կազմել է 1.3%, իսկ իրական աշխատավարձերի աճը՝ 8.5%:

Շարունակել են ավելանալ տնտեսության վարկավորման ծավալները (առաջին կիսամյակում՝ 7.8%-ով): Վատորակ վարկերի կշիռը, նվազելով 0.7 տոկոսային կետով, հունիսին կազմել է 7.9%: Վատացել են շահութաբերության ցուցանիշները. շահութաբերությունն ըստ ակտիվների նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 1.4%, իսկ շահութաբերությունն ըստ կապիտալի նվազել է 9.4 տոկոսային կետով և կազմել 7.8%: Դոլարայնացման մակարդակը երկրում աճել է 2.8 տոկոսային կետով և կազմել 60.3%:

Տարվա ընթացքում հարևան երկրների զարգացումները ֆինանսական կայունության տեսանկյունից բացասական ռիսկեր չեն ստեղծել:

Վրաստանի ՀՆԱ և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը (%)



Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկ:

ԱՄՓՈՓՈՒՄ

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել է համաշխարհային տնտեսական ակտիվության վերականգնումը, թեև գերակշռող են եղել նվազման ուղղությամբ ռիսկերը: Եական և կառուցվածքային հիմնախնդիրներ են մնացել գործազրկության բարձր մակարդակը, պարտքային հիմնախնդիրների խորացումն ու հիմնական զարգացած և արդեն իսկ զարգացող երկրների տնտեսական աճի թույլ և անկայուն մակարդակը: Համաշխարհային տնտեսական աճի կայունության և շարունակականության ապահովման համար անհրաժեշտ են պետական պարտքի, բյուջեի պակասուրդի հետ կապված հիմնախնդիրների արմատական լուծումներ, հակաճգնաժամային միջոցառումների՝ համապատասխան ծավալներով և ժամանակին կիրարկում, որոնք, ըստ էության, ընթացիկ կիսամյակում ևս չիրականացվեցին:

Ֆինանսական շուկաները դրսևորել են տատանողական վարքագիծ ողջ կիսամյակի ընթացքում՝ հիմնականում պայմանավորված պարտքային հիմնախնդիրներով երկրների տնտեսական իրավիճակով և ընթացիկ զարգացումներով:

Ջարգացող երկրներում, որոնք նախորդող տարիներին առավել կայուն տնտեսական աճ էին արձանագրել, ընթացիկ կիսամյակում տնտեսական ակտիվության տեմպերը դանդաղել են, ինչը, ըստ ամենայնի, համաշխարհային տնտեսության ներկա զարգացումների պայմաններում կունենա շարունակական բնույթ: 2012 թ. համար ԱՄՅ-ն կանխատեսել է 3.5% տնտեսական աճ՝ ընդգծելով, որ մեծ են տնտեսական աճի կայունության ռիսկերը: Համաշխարհային տնտեսական աճի ներկա մակարդակը բավարար չի լինի աշխատանքի շուկայի վերականգնման համար, ինչպես նաև կնպաստի համաշխարհային առևտրի աճի տեմպերի դանդաղմանը:

Համաշխարհային տնտեսության զարգացումները ընթացիկ կիսամյակում, ընդհանուր առմամբ, մեծ ռիսկեր չեն ստեղծել ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսական կայունության համար:

Արդյունաբերական մետաղների շուկաներում արձանագրված գների նվազումը դեռևս չի խոչընդոտել արդյունաբերական արտադրանքի աճին, իսկ գործընկեր երկրների զարգացումները պայմանավորել են արտահանման և բնակչության եկամուտների աճը:

Կիսամյակի ընթացքում հիմնական ապրանքների միջազգային գների աստիճանական նվազումն իր հերթին նպաստել է ներքին տնտեսությունում թույլ գնաճային միջավայրի ձևավորմանը:


Հարևան երկրների զարգացումներից առավել հատկանշական են ՌԴ-ից Հայաստան ներհոսող մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի, ինչպես և արտաքին ապրանքաշրջանառության աճը, որոնք նպաստել են տնային տնտեսությունների և կազմակերպությունների եկամուտների աճին՝ բարձրացնելով վերջիններիս վարկունակությունը: Ռուսաստանում և Վրաստանում արձանագրված մասնավոր պահանջարկի աճը պայմանավորել է նաև Հայաստանից արտահանվող վերամշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների աճը:

ՀՀ առևտրային բանկերը օտարերկրյա արժեթղթերում ներդրումներ գրեթե չունեն, ուստի միջազգային ֆինանսական շուկաների զարգացումները Հայաստանի բանկային համակարգում գնային ռիսկը չեն մեծացրել: Ֆինանսական շուկաների զարգացումները չեն խոչընդոտել նաև Հայաստանի բանկային համակարգի՝ արտաքին աղբյուրներից (հիմնականում մայր բանկերից) դրամական միջոցների զուտ ներհոսքի ապահովմանը:

2. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՎԱՅՐՈՒՄ

2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը



Աղբյուրը՝ ԳՀ ԱԿԾ:

2012 թ. առաջին կիսամյակում, Կենտրոնական բանկի գնահատումների համաձայն, ներքին տնտեսությունում արձանագրվել է 5.4 - 5.7% միջակայքում գտնվող տնտեսական աճ²: Առաջին եռամսյակի փաստացի տնտեսական աճը կազմել է 4.7%: Տնտեսական աճը, ինչպես և նախորդ տարի, պայմանավորվել է արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերի աճով:

Կիսամյակի ընթացքում արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի աճը գնահատվել է բավականին բարձր՝ շուրջ 12%՝ չնայած մետաղների միջազգային գների որոշակի նվազմանը: Աճը հիմնականում բացատրվում է այն փաստով, որ հանքարդյունաբերության ճյուղը, լինելով բարձր շահութաբեր, մետաղների միջազգային գների նվազումից մեծ ազդեցություն չի կրել, իսկ վերանշակող արդյունաբերության աճն ապահովվել է համաշխարհային տնտեսության որոշակի վերականգնման ներքո արտաքին և ներքին պահանջարկի ակտիվացման արդյունքում: Առավել մեծ նպաստում են ունեցել մետաղական հանքաքարի արդյունահանման, սննդամթերքի, ծխախոտի և էլեկտրաէներգիայի ենթաճյուղերը:

2011 թ. գյուղատնտեսության ճյուղում արձանագրված բարձր աճը շարունակվել է նաև 2012 թ. առաջին կիսամյակում՝ հիմնականում պայմանավորված բարենպաստ եղանակային պայմաններով և ոլորտի բարելավմանն ուղղված՝ կառավարության ձեռնարկած միջոցառումներով: Առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է գյուղատնտեսության տ/տ 1.8% աճ, իսկ կիսամյակի համար գնահատվել է շուրջ 9.5% աճ:

Շինարարության ճյուղում թեև առաջին եռամսյակի ընթացքում արձանագրվել է տ/տ 0.6% անկում, սակայն կիսամյակի գնահատականը կազմում է 2.6% աճ: Գնահատվող աճի հիմքում առաջին եռամսյակում բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճն է, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից ստացված գյուղատնտեսական ենթակառուցվածքների շինարարությանն ուղղված վարկը:

Ծառայությունների ոլորտի աճը 2012 թ. առաջին եռամսյակում կազմել է տ/տ 4.1%՝ պայմանավորված հիմնականում մեծածախ առևտրի ծավալների աճով: Կիսամյակի գնահատականը 5.0% է, ինչը, ըստ էության, վկայում է մասնավոր պահանջարկի և բնակչության եկամուտների վերականգնման մասին:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր տնտեսական միջավայրի ակտիվացման և դրական սպասումների ներքո վարկային շուկայի ակտիվությունը շարունակվել է: Բնականաբար, վարկավորման բարձր աճը մեծապես պայմանավորել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի, ինչպես նաև տնային տնտեսությունների մասնավոր սպառման աճը՝ համապատասխանաբար խթանելով համախառն առաջարկն ու համախառն պահանջարկը:

² Այս և հաջորդ ենթաբաժիններում մակրոտնտեսական ցուցանիշների կիսամյակային արժեքները ԳՀ ԿՔ գնահատումներն են, եթե այլ բան նշված չէ:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հարցմանը³ մասնակցած առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վերջիններս պարզեցրել են փոքր և միջին բիզնեսի վարկավորման պայմաններն ու ընթացակարգերը, իսկ խոշոր բիզնեսի վարկավորման պայմանները խստացվել են: Վարկավորման պայմանների փոփոխության վրա հիմնական ազդեցություն թողած գործոնների շարքում ընդգծվել են ներգրավվող ռեսուրսների բանկացումը, արտարժույթային ռիսկի առկայությունը: Տրված բաց հարցերի հիման վրա հնարավոր է եղել փաստել, որ վարկավորման առավել բարենպաստ ճյուղեր են առևտրի, էլեկտրաէներգիայի և արտադրության ոլորտները, մինչդեռ շինարարության և գյուղատնտեսության ոլորտները համարվել են եկամտաբերության տեսանկյունից ոչ շատ գրավիչ:


Կիսամյակի ընթացքում բանկային համակարգի վարկավորման 18.7% աճի պայմաններում (տ/տ աճը կազմել է 37.1%) չափատող վարկերի կշիռը, տարեսկզբի համեմատ փոքր-ինչ աճելով, կազմել է 4.3%: Չափատող վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրը եղել է գյուղատնտեսության (5.9%) և առևտրի (5.8%) ոլորտներում:

2012 թ. առաջին երկու եռամսյակների հարցումների⁴ համաձայն բաղադրյալ տնտեսական ինդեքսներն ունեցել են զարգացման տարբեր միտումներ: Մասնավորապես՝ տնտեսական ակտիվության ինդեքսը առաջին եռամսյակի ընթացքում որոշակի նվազել է՝ պայմանավորված գլխավորապես ծառայության ոլորտի արժեքներով, իսկ որպես գործունեության ընդլայնմանը խոչընդոտող հիմնական գործոն՝ նշվել է պահանջարկի նվազումը: Երկրորդ եռամսյակում ինդեքսն աճել է 2.3%-ով, ընդ որում, աճ արձանագրվել է բոլոր ենթաճյուղերի մասով, բացառությամբ՝ շինարարության: Գործարար ակտիվության ինդեքսը երկու եռամսյակներում էլ դրսևորել է աճի միտում: Միակ ճյուղը, որում նվազում է արձանագրվել երկու եռամսյակների ընթացքում շինարարությունն է, մյուս բոլոր ճյուղերում արձանագրվել է աճ: Երկու եռամսյակների տվյալներով էլ աճել են և՛ փաստացի, և՛ սպասման ենթահիմնքները:

ՀՆԱ ծախսային բաղադրիչների տեսանկյունից, առաջին կիսամյակի գնահատականներով, մասնավոր սպառման տարեկան իրական աճը կազմել է 6.8%: Վերջինս պայմանավորվել է բնակչության եկամուտների և տնտեսական ակտիվության որոշակի աշխուժացմամբ, ինչը հիմնականում մասնավոր տրանսֆերտների ներհոսքի, աշխատավարձի աճի տեմպերի և սպառողների վստահության վերականգնման և գների ցածր մակարդակի արդյունք է: Ի տարբերություն մասնավոր սպառման աճի, պետական սպառման մասով գնահատվում է 1.3% նվազում, ինչը հիմնականում պետական բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականության արդյունք է: Կիսամյակի ընթացքում շարունակաբար նվազել են նաև կապիտալ ներդրումները. մասնավոր ներդրումները՝ 12.2%-ով, հիմնականում շինարարության ոլորտում տեղի ունեցող զարգացումների հաշվին, և պետական ներդրումները՝ 25.5%-ով, ինչը կրկին պետական բյուջեի պակասուրդի կրճատման ուղղված քաղաքականության հետևանք է:

Արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի և ՀՆԱ ծավալների աճի պայմաններում զուտ արտահանման նպաստումը ՀՆԱ-ին եղել է բացասական:


Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը



* Գրաֆիկում «Ծառայություններ» ճյուղը ներառում է առևտրի և ծառայության այլ հատվածների ցուցանիշների հանրագումարը:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՆԱ ծախսային բաղադրիչները (տեսակարար կշիռը ՀՆԱ-ում)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2012 թ. երկու եռամսյակներում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ» հարցման ամփոփումներ:

⁴ ՀՀ ԿԲ կողմից անցկացվող հարցումների հիման վրա հաշվարկվող բաղադրյալ տնտեսական ինդեքսներ (մանրամասն տես ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում):

Արտաքին պետական պարտքի ծավալը և արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

2012 թ. առաջին կիսամյակում պետական պարտքի ծավալը, նախորդ տարեվերջի համեմատությամբ, ավելացել է 3.6%-ով և կազմել 3695.4 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, ըստ գնահատումների, կազմել է 34.7%: Նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է որոշակի նվազում: Դրական զարգացումներ են գրանցել նաև պարտքի կայունությունը բնութագրող ցուցանիշները՝ հիմնականում ի հաշիվ պարտքի ծավալների նկատմամբ արտահանման և տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի:


Որոշակի փոփոխության է ենթարկվել նաև արտաքին պետական պարտքի կառուցվածքը: 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում պետական պարտքի ծավալում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը թեև դանդաղ, սակայն շարունակել է նվազել՝ կազմելով 55.7%: Ընդհանուր պետական վարկերում փոփոխություն չի կրել լողացող տոկոսադրույթով վարկերի կշիռը՝ 36.6%:

ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող որակական ցուցանիշներ

Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012 I կիս.
Պարտք/ՀՆԱ (սահման 50%)	22%	19%	16%	14%	34.7%	35.1%	36.2%	34.7%
Պարտք/արտահանում (նվազ պարտքի բեռ)	78%	80%	82%	90%	227%	182.1%	154.0%	
Պարտքի սպասարկում/արտահանում (նվազ պարտքի բեռ)	4.6%	4.2%	2.9%	3.1%	6%	5.0%	4.2%	
Տոկոսավճար/արտահանում (նվազ պարտքի բեռ)	0.9%	0.7%	0.6%	0.7%	2.0%	2.4%	2.1%	

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (Պետական պարտքի մասին հաշվետվություն, 2012 թ.)

Սպառողական գների և ներմուծված ապրանքների գների ինդեքսները



* Ներմուծման գների ինդեքսի նոր մեթոդաբանությամբ հաշվարկը ԱՎԾ կողմից սկսվել է 2007 թ.: 2002 - 2006 թթ. ցուցանիշները գնահատվել են Կենտրոնական բանկի կողմից՝ ԱՎԾ հրապարակած՝ հին մեթոդաբանությամբ հաշվարկված ներմուծման գների ինդեքսի հիման վրա:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱՎԾ:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ներքին տնտեսության դրական զարգացումներն անդրադարձել են նաև ՀՀ պետական բյուջեի վրա: Բյուջեի եկամուտների հավաքագրումները աճել են ողջ կիսամյակի ընթացքում. բյուջեի ընդհանուր եկամուտները տ/տ աճել են ավելի քան 5.0%-ով, մինչդեռ ծախսերի աճը կազմել է 3.4%, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդի նվազման միտումը շարունակվել է նաև ընթացիկ տարում՝ տ/տ 26.8%-ով և կազմել (ԾԻԳ-ի միջոցները ներառյալ) 16846.1 մլն դրամ: Հարկային եկամուտների աճը համեմատաբար բարձր է եղել՝ 6.2%, իսկ առավել արագ աճել են եկամտահարկից ստացվող եկամուտները՝ 16.7%: Ծախսերի կազմում ավելացել են գրեթե բոլոր ծախսային հոդվածները:

Բյուջեի պակասուրդը ծախսերի նկատմամբ եկամուտների առաջանցիկ աճի և տնտեսական աճի պայմաններում կիսամյակի արդյունքներով գնահատվում է ՀՆԱ-ի 1.1%-ը:

Հիմնական պարենային և հումքային ապրանքների միջազգային գների, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների գների նվազման հետևանքով 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ներքին տնտեսությունում ձևավորվել է ընդհանուր գների մակարդակի շարունակական նվազման միտում: Հունիսին 12-ամսյա գնաճը բավականին ցածր է եղել՝ 0.7%:

2.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ ⁵

Համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումների պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խորացել է և կազմել 380 մլն ԱՄՆ դոլար: Ընթացիկ հաշվի պակասուրդի վատացումը մեծապես պայմանավորված է եղել ապրանքային հաշվեկշռի պակասուրդի մեծացմամբ: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալը տ/տ ավելացել է 8.3%-ով և կազմել 2.7 մլրդ ԱՄՆ դոլար:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը հունվար-հունիս ամիսների ընթացքում կազմել է տ/տ 6.04%, մինչդեռ իրական աճը ⁶ կազմել է 9.3%: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին տնտեսության ակտիվության աճով և ներմուծման դոլարային գների նվազմամբ:

Կիսամյակի ընթացքում աճն առավել զգալի է եղել «Հանքահումքային արտադրանք», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և այլ իրեր», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալներում:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կիսամյակային տ/տ աճը կազմել է 10.2%⁷: Արտահանման բարձր աճը պայմանավորվել է արդյունաբերության ճյուղի աճի բարձր նակարդակով: Արտահանման աճին առավել մեծ նպաստում են ունեցել արտահանման հիմնական մաս կազմող «Հանքահումքային արտադրանք», «Պատրաստի սննդի և գյուղատնտեսական արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալները:


Արտահանման համեմատությամբ ներմուծման ծավալների առավել մեծ աճի արդյունքում, առևտրային հաշվեկշռի պակասուրդը փոքր-ինչ խորացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և կազմել 1333.2.0 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման և արտահանման աշխարհագրական կառուցվածքում պահպանվել են խոշոր կենտրոնացումները, ՀՀ հիմնական գործընկեր երկրների կազմը գրեթե չի փոխվել: Արտահանման կառուցվածքում մոտ 1 տոկոսային կետով աճել է ԱՊՀ անդամ երկրների կշիռը, և գրեթե 2 տոկոսային կետով նվազել է Եվրոպական տնտեսական միության երկրների կշիռը, իսկ մնացած գործընկերների կշիռներում փոփոխություններն աննշան են եղել: Արտահանումը շարունակում է կենտրոնացված մնալ և՛ ըստ երկրների, և՛ ըստ ապրանքատեսակների, ինչի պարագայում մեծանում է հանքագործական և սննդի ճյուղերի խոցելիությունը կոնկրետ երկրում կամ զլոբալ տնտեսությունում հավանական ցնցումներից:

Ներմուծման կտրվածքով հիմնական գործընկեր երկրներ են շարունակում մնալ Եվրոպական տնտեսական միության և ԱՊՀ երկրները, որոնց միասնական կշիռը, բավականին աճելով, կազմել է 59.1%:


⁵ Տվյալները ներկայացված են ըստ վճարային հաշվեկշռի:
⁶ Ըստ ԿԲ գնահատումների:
⁷ Արտահանման իրական աճը, ըստ ԿԲ գնահատումների, կազմել է 13.0%:

ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԿԾ:

Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունը ըստ երկրների (30.06.2012 թ. դրությամբ)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2.3. ԶՈՒՏ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՏՐՎՆԱՖԵՐՏՆԵՐ


ՀՀ բնակչության կողմից տնօրինվող եկամուտների կարևոր բաղադրատարր են համարվում մասնավոր տրանսֆերտները և սեզոնային արտազան աշխատողների եկամուտները, որոնց գերակշիռ մասը ստացվում է Ռուսաստանի Դաշնությունից: Ինչպես արդեն նշվել է, 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՌԴ-ում շարունակվել է տնտեսական աշխուժացումը (մանրամասն տես՝ «1.2. Տարածաշրջանի երկրների զարգացումները» ենթաբաժինը): Տնտեսական ակտիվությունը բարձր է եղել հատկապես շինարարության և առևտրի ոլորտներում, որտեղ էլ հիմնականում զբաղված են Ռուսաստան աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիները: Վերոնշյալ զարգացումները դրական են անդրադարձել Հայաստան ներհոսող զուտ մասնավոր տրանսֆերտների և արտազան աշխատողների աշխատուժից եկամուտների վրա, որոնց հարաբերակցությունը ՀՆԱ-ին շարունակում է մնալ բարձր: ՀՀ կենտրոնական բանկի գնահատումների համաձայն՝ 2012 թ. առաջին կիսամյակում զուտ մասնավոր տրանսֆերտների և սեզոնային արտազան աշխատողների աշխատուժից եկամուտների աճը կազմել է տ/տ 9.6%՝ հիմնականում պայմանավորված աշխատողների աշխատուժից եկամուտների աճով: 2011 թ. առաջին կիսամյակի համեմատ, 0.1 տոկոսային կետով աճել է ոչ առևտրային փոխանցումների և ՀՆԱ հարաբերակցությունը, սակայն փոխարժեքի փոփոխությունները հաշվի առնելու պարագայում վերոնշյալ ցուցանիշն աճել է 1.2 տոկոսային կետով և կազմել 15.6%:

Զուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2012 թ. համար ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի վերաբերյալ կանխատեսումները կախված են ՌԴ տնտեսության աշխուժացման տեմպերից: ՌԴ տնտեսության վերաբերյալ միջազգային կառույցների կողմից կատարված գնահատումների համատեքստում ՀՀ ԿԲ կանխատեսումների համաձայն՝ 2012 թ. ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի աճը կլինի 10 - 12% միջակայքում, ինչն էլ իր հերթին, կարող է նպաստել ընթացիկ սպառման և բնակարանաշինության ծավալների աճին:

Դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է նաև բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքը, որը աստիճանաբար մոտենում է նախաճգնաժամային մակարդակին: 2012 թ. առաջին կիսամյակում այն ավելացել է տ/տ 8.0%-ով և կազմել 532 մլն ԱՄՆ դոլար: Զուտ փոխանցումների գերակշիռ մասը ստացվել է Ռուսաստանի Դաշնությունից և ԱՄՆ-ից, համապատասխանաբար՝ 89.6% և 4.3%:

2.4. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՐՏՔԻ ԲԵՌ

2012 թ. առաջին կիսամյակում, տնտեսական աշխուժացմանը զուգընթաց, տնային տնտեսությունների պարտքի բեռը⁸ բնութագրող ցուցանիշներն աճել են: ՀՆԱ-ի և բնակչության ավանդների

⁸ Սույն նյութում տնային տնտեսությունների պարտքի բեռը վարկային հաստատությունների հանդեպ տնային տնտեսությունների պարտավորությունների համարադրմամբ է:

համեմատ պարտքի առաջանցիկ աճի հետևանքով պարտք/ՀՆԱ և պարտք/ավանդներ հարաբերակցությունները ավելացել են համապատասխանաբար 3.6 և 2.3 տոկոսային կետերով՝ կազմելով 17.0% և 102.2%: Այնուհանդերձ, Հայաստանում տնային տնտեսությունների պարտքի բեռը զիջում է Արևելյան Եվրոպայի երկրների վերոնշյալ ցուցանիշներին:


Տնային տնտեսությունների կողմից տնօրինվող եկամուտների վրա դրական են անդրադարձել դիտարկվող ժամանակահատվածում ոչ առևտրային դրամական փոխանցումների, անվանական աշխատավարձերի, ինչպես նաև կիսամյակի ընթացքում արձանագրված զբաղվածության մակարդակի աճերը: Այնուամենայնիվ, ցածր եկամուտներ ունեցող բնակչության կշիռը շարունակում է մնալ բարձր⁹:

2012 թ. առաջին կիսամյակում միջին անվանական աշխատավարձն բարձրացել է տ/տ 6.2%-ով: Գնաճի առավել ցածր մակարդակի արդյունքում 1.7%-ով աճել է նաև իրական աշխատավարձը: Աշխատավարձերի աճ գրանցվել է մասնավոր և պետական հատվածներում՝ պայմանավորված ինչպես արտադրողականության, այնպես էլ աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճով: Աշխատուժի նկատմամբ պահանջարկը աճել է առավելապես ի հաշիվ արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում թողարկման ծավալների աճի, որի արդյունքում կիսամյակի ընթացքում գործազրկությունը նվազել է տ/տ 0.7 տոկոսային կետով և կազմել 5.6%: 2012 թ. սպասվող տնտեսական աճի պայմաններում ակնկալվում է աշխատուժի նկատմամբ պահանջարկի հետագա աճ, որը կուղեկցվի ինչպես զբաղվածության, այնպես էլ անվանական աշխատավարձերի աճով: ՀՀ ԿԲ կողմից կանխատեսվող գնաճի պարագայում սպասվում է նաև իրական աշխատավարձերի 3.4% աճ:

Բնակչության տնտեսական վիճակի և եկամուտների սպասումների անուղղակի գնահատական կարելի է ստանալ նաև սպառողների վստահության ինդեքսի բաղադրատարրերից՝ ներկա և ապագա պայմանների ենթահինդեքսներից¹⁰: Մասնավորապես, 2012 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում, նախորդ եռամսյակի համեմատ, ներկա պայմանների ենթահինդեքսն աճել է համապատասխանաբար 3.3%-ով և 1.4%-ով, ընդ որում՝ երկրորդ եռամսյակում զգալի աճ է արձանագրվել եկամուտների փոփոխության ենթահինդեքսի մասով: Համեմատաբար ցածր է մնում ՀՀ ընդհանուր տնտեսության վիճակի վերաբերյալ տնային տնտեսությունների գնահատականը: 2012 թ. երկրորդ եռամսյակում բարելավվում նկատելի է եղել նաև տնային տնտեսությունների սպասումների առումով: Տնային տնտեսությունների շրջանում ՀՀ ԿԲ կողմից կատարված եռամսյակային հարցումները ցույց են տվել, որ տնտեսական զարգացումների հետ կապված՝ բնակչության սպասումները լավատեսական են խոշոր գնումներ կատարելու, ինչպես նաև եկամուտների փոփոխության առումով: Այնուհանդերձ, ապագա պայմանները գնահատող բոլոր ենթատարրերը շարունակում են զիջել 2011 թ. երկրորդ եռամսյակի մակարդակին:


Եկամուտների աճն իր ազդեցությունն է ունեցել նաև տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակի վրա: Մաս-

Տնային տնտեսությունների պարտքի և եկամուտների ցուցանիշներ, %




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Միջին անվանական աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱՎԾ:

Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

⁹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2012 թ. երկրորդ եռամսյակում անցկացված տնային տնտեսությունների հարցման ամփոփում:


¹⁰ Աղբյուրը՝ նույնը:

ՏՆԱՅԻՆ ԹՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՍՎԱԾՔԸ




Աղբյուրը՝ 77 ԿԲ:

ԲԱՆԿԵՐԻ և ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՒՖԻՏԵՔՅԱՅԻՆ և ՍԱԿՈՒՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՐՈՒՄՖԵՆԸ



Աղբյուրը՝ 77 ԿԲ:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը



1. Քարտային վարկեր, 2. Ոսկու գրավով վարկեր, 3. Ավտովարկեր, 4. Կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր, 5. Այլ սպառողական վարկեր
Աղբյուրը՝ 77 ԿԲ:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում բանկերում տնային տնտեսությունների ավանդների մակարդակը աճել է 16.0%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 15.2% ցուցանիշի փոխարեն: Տնային տնտեսությունների ավանդների աճին առավելապես նպաստել է դրամային ժամկետային ավանդների ծավալների աճը, որի շնորհիվ 1.1 տոկոսային կետով ավելացել է վերջինիս տեսակարար կշիռը ընդհանուր ժամկետային ավանդներում:

Տարեվերջի համեմատ՝ 2012 թ. առաջին կիսամյակում գրանցվել է ֆինանսական հաստատությունների նկատմամբ տնային տնտեսությունների պարտավորությունների 19.4% աճ, ընդ որում՝ ըստ ՀՀ ԿԲ հարցումների, տնային տնտեսությունների պարտքի բեռի կազմում ֆինանսական հաստատությունների պարտքը կազմում է բնակչության ընդհանուր պարտքի շուրջ 65%-ը¹¹: Վարկային կազմակերպությունների և գրավատների հանդեպ տնային տնտեսությունների պարտավորությունները թեև արագ տեմպերով աճում են, սակայն ընդհանուր ֆինանսական պարտավորությունների կառուցվածքում շարունակում են մնալ անհամեմատ ցածր՝ կազմելով ֆինանսական պարտավորությունների ընդամենը 13.0%-ը:

Տնային տնտեսությունների վարկավորման ոլորտում ակտիվություն նկատվել է առավելապես սպառողական վարկավորման մասով, որի աճը 2012 թ. առաջին կիսամյակում կազմել է 20.2%: Սպառողական վարկավորման աճին նպաստել է բոլոր վարկատեսակների գծով արձանագրված աճը՝ բացառությամբ ավտո-վարկավորման, կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկերի: ՀՀ ԿԲ հարցման արդյունքները ցույց են տվել, որ ֆինանսական հաստատությունների համար սպառողական վարկավորումը շարունակում է մնալ վարկավորման ցանկալի ուղղություն՝ պայմանավորված այս վարկատեսակի համեմատաբար բարձր եկամտաբերությամբ¹²: Այս ոլորտում բանկային բարձր մրցակցության շնորհիվ՝ կիսամյակի ընթացքում կատարվել են մի շարք որակական դյուրինացումներ, ներդրվել են նոր վարկատեսակներ, բարելավվել ծառայությունների մատուցման որակը: Ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքի էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Դիտարկվող ժամանակահատվածում հիփոթեքային վարկավորումն ավելացել է 11.1%-ով (կամ 13.5 մլրդ դրամով), որը 2.8 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը: Հիփոթեքային վարկավորման աճին առավելապես նպաստել է անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկավորումը, որի աճը կազմել է 10.0 մլրդ դրամ: ՀՀ հիփոթեքային շուկայի ընդլայնման հնարավորությունների մասին են վկայում նաև հիփոթեքային վարկերի նկատմամբ առկա և պոտենցիալ պահանջարկը, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների սպասումները¹³: ՀՀ հիփոթեքային շու-


¹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից տնային տնտեսությունների կանխիկ արտարժույթի պաշարների և պարտքի ցուցանիշների հարցման տարեկան ամփոփումներ:
¹² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2012 թ. առաջին և երկրորդ եռամսյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ» հարցման ամփոփումներ:
¹³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2012 թ. առաջին և երկրորդ եռամսյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ» հարցման ամփոփումներ:

կայի զարգացմանը որոշակիորեն նպաստում է նաև Ազգային հիփոթեքային ընկերության գործունեությունը, որի նպատակն է առավել հասանելի դարձնել բնակարանային վարկերը:

2012 թ. առաջին կիսամյակում, տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալների աճին զուգընթաց, որոշակիորեն աճել է նաև տնային տնտեսությունների հետ կապված վարկային ռիսկը: Մասնավորապես՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված սպառողական և հիփոթեքային վարկերում չաշխատող վարկերի կշիռը համապատասխանաբար աճել է 0.6 և 1.2 տոկոսային կետերով՝ կազմելով 3.9% և 5.3%:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրված տնտեսական աճի, ոչ առևտրային փոխանցումների ներհոսքի և աշխատաշուկայում գրանցված բարելավումների պայմաններում, տնային տնտեսությունների վարկավորումից բխող ռիսկերը չեն կարող նշանակալից ազդեցություն ունենալ ֆինանսական կայունության վրա:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի միջին կշռված տոկոսադրույքները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2.5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԵՐ

Ֆինանսական կայունության տեսանկյունից առանձնակի ուշադրություն է դարձվում նաև անշարժ գույքի շուկայի զարգացումներին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են անդրադառնալ ֆինանսական համակարգի կայուն գործունեության վրա: Հաշվետու ժամանակահատվածում առևտրային բանկերը շարունակել են տրամադրել հիփոթեքային վարկեր անշարժ գույքի շուկայական արժեքի 60 - 80%-ից ոչ ավելի, որի արդյունքում անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը ֆինանսական կայունության տեսանկյունից նշանակալի չեն եղել (նախնական տես «Առևտրային բանկերի շուկայական ռիսկ» ենթաբաժինը):


2012 թ. հունիսին, տարեսկզբի համեմատ, արձանագրվել է Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գների 2.4% աճ¹⁴: Ընդ որում՝ վերոնշյալ աճը պայմանավորվել է բոլոր, հատկապես Աջափնյակ և Կենտրոն վարչական շրջաններում բնակարանների գների աճով՝ համապատասխանաբար 3.4%-ով և 3.3%-ով: Այնուհանդերձ, 2012 թ. հունվար-հունիս ժամանակահատվածում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Երևանում բազմաբնակարան շենքերի բնակարանների միջին գները նվազել են 1.9%-ով (2011 թ. առաջին կիսամյակում նվազումը կազմել է տ/տ 5.9%): Գների նվազումն ուղեկցվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների առավաճառքի քանակի նվազմամբ, որը կազմել է տ/տ 7.9%: Հաշվետու ժամանակահատվածում 5.1 տոկոսային կետով նվազել է անշարժ գույքի առավաճառքի քանակը՝ բնակարանների մասնաբաժնի մասով: Անշարժ գույքի շուկայի ակտիվության անուղղակի բնութագրիչներից է նաև հանրապետությունում իրա-

Բնակարանների միջին գների ինդեքսը Երևանում (1 քառ. մ)



Աղբյուրը՝ ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:


Անշարժ գույքի գործառնությունների քանակի ինդեքսը



Աղբյուրը՝ ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

¹⁴ ՀՀ-ում անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով, որպես անշարժ գույքի գնային զարգացումների չափորոշիչ է ընտրվել Երևան քաղաքի բնակարանների միջին գների ինդեքսը: Մինչև 2005 թ. հունիսը անշարժ գույքի գնանշումն իրականացվել է ԱՄՆ դոլարով, ինչի պատճառով անշարժ գույքի դրամային գները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքը:

Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

կանացված գրավադրումների քանակը, որը հաշվետու ժամանակահատվածում նվազել է տ/տ 18.8%-ով:


Գների նվազմանը զուգընթաց, նվազել է նաև անշարժ գույքի առաջարկը, ինչը որոշակիորեն զսպել է գների հետագա նվազումը: 2012 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի հետ կապված շինարարության ծավալները նվազել են 3.8%-ով: Այնուհանդերձ, վերջինիս տեսակարար կշիռը ընդհանուր իրականացված շինարարության ծավալում աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 28.8%: Նվազել են նաև բնակելի շենքերի գործարկման ծավալները (4.4%)՝ այսինքնավորված հունիս ամսին կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների կրճատմամբ: Արդյունքում՝ 2012 թ. առաջին կիսամյակում, 2011 թվականի համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, կազմակերպությունների միջոցների հաշվին գործարկված շենքերի մասնաբաժինը նվազել է 18.4 տոկոսային կետով և կազմել 35.4%: Նախորդ 2 տարիների անընդմեջ նվազումներից հետո առաջին անգամ արձանագրվել է բնակչության միջոցների հաշվին բնակելի շենքերի գործարկման ծավալների աճ, որը, սակայն, վառ ընդգծված միտում չունի: Բնակչության միջոցների հաշվին բնակելի շենքերի գործարկման ծավալներն աճել են հատկապես Երևանում, ինչպես նաև Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում: Դիտարկվող ժամանակահատվածում 6.5%-ով աճել են վարկային հաստատությունների կողմից բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությանն ուղղված վարկավորման ծավալները:

Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

Ֆինանսավորման աղբյուրներ	2012 թ. I կիս. գործարկված բնակելի շենքեր (թառ. մ)	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	Տոկոսային փոփոխությունը 2011 թ. I կիս. համեմատությանը
Ընդամենը, այդ թվում՝	116647	100%	13.9%
պետական բյուջե	21268	18.2	6.7 անգամ
կազմակերպությունների միջոցներ	44654	38.3	35.4%
բնակչության միջոցներ	50725	43.9	2.1%

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ

Բնակարանների առուվաճառքի և անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի քանակի բաշխվածությունը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱՀԸ:

Անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի աճի վրա որոշ չափով իր ազդեցությունն է ունեցել նաև հիփոթեքային վարկավորումը, որի նկատմամբ պահանջարկը շարունակում է բավականին մեծ մնալ: Հիփոթեքային շուկայի հետագա ընդլայնմանը կարող են նպաստել տնային տնտեսությունների եկամուտների աճը, ինչպես նաև անշարժ գույքի շուկայում ընթացող բարեփոխումները: ՀՀ ԿԲ հարցումների համաձայն՝ առևտրային և վարկային կազմակերպությունները սպասում են հիփոթեքային վարկավորման նկատմամբ պահանջարկի հետագա ակտիվացում: ՀՀ տարածքում բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը և տրված անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի քանակը հիմնականում ունեցել են գրեթե համանման մարզային բաշխվածություն. ինչպես բազմաբնակարան

շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքները, այնպես էլ հիփոթեքային շուկան հիմնականում կենտրոնացած են Երևան քաղաքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նախորդ տարի արձանագրված տնտեսական վերականգնումը շարունակվել է նաև 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ պայմանավորվելով ինչպես արտաքին, այնպես էլ ներքին զարգացումներով: Արդյունաբերական նշանակության ապրանքատեսակների պահանջարկի, մասնավոր տրանսֆերտների ներհոսքի, գյուղատնտեսության ճյուղում արձանագրված աճը և վարկավորման աճի բարձր մակարդակը ապահովել են տնտեսական ակտիվության վերականգնման շարունակականությունը:


Մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի և անվանական աշխատավարձերի աճը դրական են ազդել բնակչության իրական եկամուտների, հետևաբար և՛ վարկունակության վրա: Տնտեսության ճյուղերի և արտահանման աճը իրենց հերթին բարձրացրել են իրավաբանական անձանց վարկունակությունը՝ ամրապնդելով ֆինանսական կայունությունը:

Ներքին և արտաքին գնային զարգացումները և ԿԲ իրականացրած դրամավարկային քաղաքականությունը հնարավորություն են տվել տնտեսությունում ապահովելու թույլ գնաճային միջավայր, ինչը դրական է անդրադարձել նաև տնտեսավարող սուբյեկտների վարկունակության վրա:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ


3.1. ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Ռեպո գործառնությունների ծավալները և տոկոսադրույքների մակարդակները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային ռեսուրսների հարթակում իրականացված գործարքների ծավալը և միջին կշռված տոկոսադրույքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ԿԲ-ում առևտրային բանկերի՝ ՀՀ դրամով թրթակցային հաշիվների և ՀՀ դրամով պահուստավորման ենթակա միջոցների հարաբերակցությունը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2012 թվականի առաջին կիսամյակում շարունակվել են գնաճային միջավայրի մեղմման դեռևս նախորդ տարվանից դրսևորված միտումները: Ձևավորված 12-ամսյա ցածր գնաճի, հավասարակշռված ռիսկերի և լավատեսական հեռանկարի առկայությամբ ԿԲ-ն տարվա առաջին եռամսյակում իրատեսական է համարել նպատակային ցուցանիշի ձեռքբերումը գործող տոկոսադրույքի պայմաններում: Երկրորդ եռամսյակում գնաճի առավել ցածր մակարդակի պարագայում ԿԲ-ն կրկին անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը՝ 8.0%, քանի որ մայիս-հունիս ամիսներին դրամի որոշակի արժեզրկումը արդեն իսկ հանգեցրեց դրամավարկային պայմանների թուլացման: Իրադարձությունների նման զարգացման ներքո ֆինանսական շուկայի արձագանքը ընդհանուր առմամբ եղել է չեզոք, և այդպիսով՝ շուկայի բոլոր հատվածներում տոկոսադրույքները գրեթե չեն փոփոխվել:

Միջբանկային փողի շուկան, որը շարունակում է մնալ դրամական շուկայի բաղկացուցիչ մասը, հաշվետու կիսամյակում եղել է բավականին ակտիվ: Կիսամյակի ընթացքում միջբանկային ռեպո և ԿԲ ռեպո շուկաներում իրականացված միջին անսական գործարքների ծավալները կազմել են համապատասխանաբար 12.4 մլրդ դրամ և 15.3 մլրդ դրամ: Շուկայական ռեպո տոկոսադրույքը տարվա վերջի համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել է 10.5%: Տարեսկզբից տոկոսադրույքների նվազմանը զուգընթաց, ակտիվացման միտումներ են դիտարկվել նաև միջբանկային վարկային հարթակում, որտեղ միջին անսական շրջանառությունը կազմել է 498 մլրդ դրամ:

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի դրամային ավելցուկային իրացվելիությունը մշտապես եղել է ցածր, որը հետևանք է դեռևս նախորդ տարվանից պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխման (ներգրավված արտարժույթային միջոցների դիմաց՝ ամբողջությամբ դրամով պահուստավորում):

Եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրորդային շուկայում եկամտաբերությունները հիմնականում նվազել են՝ բացառությամբ մինչև 5 տարի ժամանակահատվածի: Կորի թեքությունը փոխվել է 0.27-ից 0.37, ինչը վկայում է կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին:


2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ առկա պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը՝ դյուրացիան, կազմել է 1135 օր՝ տարվա վերջի համեմատ աճելով 120 օրով, իսկ տոկոսադրույքի ռիսկի գնահատման նպատակով հաշվարկվող մոդիֆիկացված դյուրացիայի միջին ցուցանիշը (D_M), շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի համար կազմել է 2.5%՝ տարվա վերջի համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով:

30.06.2012 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար

D _M	մինչև 6 ամիս	6 ամիսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	7-10 տարի
	0.21	0.62	1.35	2.29	3.57	5.23

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորեորը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

30.06.12 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար

Ցուցանիշ	Մինչև 6 ամիս	6 ամիսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	Ընդամենը
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի նպատակով ձեռք բերված ՊՊ ծավալ (մլն դրամ)	6735.27	11820.72	28680.73	41661.11	17471.61	106369.44
Տեսակարար կշիռը ընդհանուր պորտֆելում	6.33%	11.11%	26.96%	39.17%	16.43%	100%
D _M	0.19	0.63	1.43	2.84	5.23	2.44
Գնի փոփոխություն +/- (մլն ՀՀ դրամ)	13.01	74.34	411.55	1182.03	914.41	2595.34

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Պետական գանձապետական կարծաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Եկամտաբերության 1% աճի պարագայում առևտրային բանկերի պետական արժեթղթերի պորտֆելի հավանական վնասները կարող են կազմել մոտ 2.6 մլրդ դրամ (առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի մոտ 0.7%-ը), ընդ որում՝ գերակշիռ մասը սպասվում է միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերից՝ պայմանավորված պարտատոմսերի ընդհանուր ծավալում վերջիններիս համեմատաբար մեծ տեսակարար կշռով:

2012 թվականի առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների եկամտաբերությունների միջին քառակուսային շեղումը նախորդ տարվա համեմատ աճել է 0.14 կետով և կազմել է 2.64: Շուկայական ռեպո տոկոսադրույքների միջին քառակուսային շեղումը նվազել է 0.25 կետով և կազմել 0.94:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց¹⁵ կողմից արժեթղթերի շուկայում իրականացված գործառնությունները (ներառյալ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ հետ գործարքների) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 7.8%-ով և կազմել են 1 տրլն 226 մլրդ դրամ: Արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են վերոնշյալ շրջանառության 21.3%-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.1 տոկոսային կետով:


Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


¹⁵ 30.06.2012 թ. դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք 21 առևտրային բանկերն ու 8 ներդրումային ընկերություններն են:

ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության¹⁶ մակարդակի տատանողականությունը շարունակել է նվազել. պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության ցուցանիշի ստանդարտ շեղումը կազմել է 2.1 (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2.7):

Պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ երկարաժամկետ և միջին ժամկետայնության պետական պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 47.1% և 41.2%, իսկ կարճաժամկետ պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունների կշիռը՝ 11.7%:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) հաշվետու կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 1.3%-ով և կազմել են 965.4 մլրդ դրամ, ընդ որում՝ ռեպո գործառնությունների գերակշիռ մասը՝ 99.7%-ը, կրկին պետական արժեթղթերով իրականացված գործարքներն են: Կորպորատիվ պարտատոմսերով կնքված ռեպո գործարքները կազմել են 0.3%, իսկ բաժնետոմսերով կնքված ռեպո գործարքները՝ 0.1%:

Կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ընդհանուր շրջանառությունը 2012 թվականի առաջին կիսամյակում կազմել է 2.6 մլրդ դրամ, որից 23.1%-ը ռեպո գործառնություններն են:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքում դեռևս փոքր է կարգավորվող շուկայում իրականացված առուվաճառքի գործառնությունների կշիռը՝ 0.8%, որը սահմանափակում է կարգավորվող շուկայի գործառնական ռիսկերի ազդեցությունը ֆինանսական կայունության վրա: Հաշվետու կիսամյակում այս շուկայում նույնպես գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները (կազմել են բորսայական շրջանառության 64.8%-ը): Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնային արժեթղթերով իրականացված առուվաճառքի գործառնությունները կազմել են համապատասխանաբար 27.5% և 7.7%:

ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացում/ՀՆԱ¹⁷ ցուցանիշը կիսամյակի վերջին կազմել է 1.5%՝ տարեվերջի համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով:

3.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ՀՀ ներքին արժութային շուկայում 2012 թվականի առաջին կիսամյակում դրսևորվել է ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկում: ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 7.71%-ով, իսկ վարիացիայի ցուցանիշը կազմել է 101.21:

¹⁶ Պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիությունը հաշվարկվում է որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ամսվա ընթացքում իրականացված առուվաճառքի գործառնությունների և շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի ծավալների հարաբերակցություն:

¹⁷ Ցուցակված բաժնետոմսերի շուկայական գնի հարաբերությունը ՀՆԱ-ին:

Ըստ ԿԲ նախնական գնահատումների¹⁸ 2012 թվականի առաջին կիսամյակում միջին կիսամյակային անվանական արդյունավետ փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 0.9%-ով, իսկ իրական արդյունավետ փոխարժեքը՝ 2.5%-ով:

Արժութային շուկայում բորսայական շրջանառության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գրեթե չեն փոփոխվել և միջինը կազմել են մոտ 63 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է ներբանկային առքի և վաճառքի ծավալներին, այստեղ նույնպես հաշվետու կիսամյակում կտրուկ փոփոխություններ չեն եղել, և գործարքների ծավալները միջինում կազմել են համապատասխանաբար 307 մլն ԱՄՆ դոլար և 365 մլն ԱՄՆ դոլար: Տարեսկզբից բանկային համակարգի՝ արտարժույթի առուվաճառքից օգուտը կազմել է 5.8 մլրդ դրամ:

ԱՍՓՈՓՈՒՄ

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում միջազգային շուկաներում ձևավորված գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում, ինչպես նաև ներքին շուկայում ոչ գնաճային զարգացումների և երկրորդային ազդեցությունների մեղմման ներքո ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Ընդհանուր առմամբ, ֆինանսական շուկան նման քաղաքականությամբ արձագանքել է նույն չեզոքությամբ, և շուկայական տոկոսադրույքները էական փոփոխությունների չեն ենթարկվել:


Վարկերի պահանջարկի աճին զուգընթաց, բավականին աշխույժ է եղել նաև միջբանկային շուկան՝ այդպիսով նպաստելով իրացվելիության արդյունավետ բաշխման մեխանիզմների կայացմանը:

Ինչպես ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացվող արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնություններում, այնպես էլ կարգավորվող շուկայում գերակշռել են պետական պարտատոմսերով գործարքները:

Տարեսկզբից ներքին արժութային շուկայում զարգացումները եղել են առավելապես արժեզրկման ուղղությամբ, ինչը, սակայն, ֆինանսական կայունության տեսանկյունից խոցելի ռիսկեր չի առաջացրել:

Այսպիսով՝ ամփոփելով կիսամյակը կարելի է ասել, որ ՀՀ դրամական շուկայի ազդեցությունը ընդհանուր ֆինանսական համակարգի վրա շարունակում է մնալ փոքր, որի հիմնական պատճառներն են գործիքների ընտրության դեռևս սահմանափակ հնարավորությունը, երկրորդային շուկայի փոքր ծավալները, ինչպես նաև միջազգային շուկաներին միասնացման ցածր մակարդակը:

ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները





Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

¹⁸ ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը, ինչպես նաև ՀՀ արտաքին մրցունակությունը ուսումնասիրելու նպատակով դիտարկվում են նաև անվանական արդյունավետ և իրական արդյունավետ փոխարժեքները, որոնք հաշվարկվում են արտաքին ապրանքաշրջանառության մեջ տասնմեկ հիմնական գործընկեր երկրներին (Եվրոգոտի, Ռուսաստան, Ուկրաինա, Անգլիա, Շվեյցարիա, Իրան, ԱՄՆ, Թուրքիա, Վրաստան, Ճապոնիա, Չինաստան) բաժին ընկնող համապատասխան կշիռների հիման վրա:

4. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների



1. Բանկեր,
2. Վարկային կազմակերպություններ,
3. Ապահովագրական ընկերություններ,
4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք,
5. Այլ ֆինանսական կազմակերպություններ

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Հայաստանի բանկային համակարգի¹⁹ բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 90.0%-ը, ուստի Հայաստանի ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս հաստատությունների մասնաբաժինը, բանկային համակարգի համեմատ, բավականին փոքր է, և Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա դրանց գործունեության ազդեցությունը մեծ չէ:

2012 թ. առաջին կիսամյակում բանկերը շարունակել են բարձր ակտիվություն ցուցաբերել վարկային շուկայում՝ պայմանավորված հետձգնաժամային ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածի աստիճանական վերականգնմամբ և տրանսֆերտների աճով: Բանկերի ակտիվ վարկավորմանը նպաստել են նաև բանկերի կողմից իրավաբանական անձանց վարկավորման խթանմանն ուղղված քայլերը, միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորումը:

Տարվա ընթացքում բանկերը շարունակել են ընդլայնել մասնաճյուղերի ցանցը, մատուցվող ծառայությունների շրջանակը և բարելավել ծառայությունների որակը՝ նպաստելով բանկային ծառայությունների հասանելիության մեծացմանն ու բանկային մշակույթի զարգացմանը:


4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

Բանկային համակարգի կայունության քարտեզը

Բանկային համակարգի կայունության վարքագծի վերաբերյալ պատկերացում է տալիս բանկային կայունության քարտեզը²⁰, որն արտացոլում է բանկերին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշների փոփոխությունը երկու տարբեր ժամանակաշրջանների ընթացքում:

Բանկային կայունության քարտեզի բաղադրիչները 2012 թ. առաջին կիսամյակում, 2011 թ. երկրորդ կիսամյակի համեմատ, առանձնապես մեծ փոփոխության չեն ենթարկվել: Դրական տեղաշարժ է գրանցվել արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշների վարքագծում: Որոշակի նվազել են կապիտալի համարժեքության, ակտիվների որակի, եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների արժեքները (մանրամասն տես՝ «Վարկային ռիսկ», «Իրացվելիության ռիսկ» և «Շուկայական

Բանկային համակարգի կայունության քարտեզը. 2012 թ. առաջին կիսամյակի միջինը 2011 թ. երկրորդ կիսամյակի միջինի համեմատ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

¹⁹ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերը:

²⁰ Բանկային համակարգի կայունության քարտեզում օգտագործվել են կապիտալի համարժեքությունը, ակտիվների որակը, իրացվելիությունը, եկամտաբերությունը, տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթային ռիսկը բնութագրող ցուցանիշները: Ցուցանիշները քարտեզում օգտագործելուց առաջ նորմավորվել են 1-10 չափողականությանը, հաշվարկվել են ԱՄՆ մեթոդաբանությանը համապատասխան: Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազեցման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին: Բանկային համակարգի կայունության քարտեզը չի կարող մեկնաբանվել որպես ֆինանսական կայունության մակարդակի արտացոլում, այն ընդամենը տալիս է պատկերացում ներառված ռիսկերի մակարդակի փոփոխության վերաբերյալ՝ աճել է, թե՞ նվազել:

ռիսկ» ենթաբաժիններում) հիմնականում պայմանավորված կիսամյակի ընթացքում վարկավորման ծավալների ընդլայնմամբ:

4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում, անվանական ՀՆԱ աճին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվել է բանկային համակարգի ակտիվների առաջանցիկ աճ, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 3.8 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 57.9%: ՀՆԱ աճի նկատմամբ վարկերի առաջանցիկ աճի արդյունքում բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը տարեսկզբի համեմատ ավելացել է 5.5 տոկոսային կետով և կազմել 37.1%:

Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների և ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 1.0 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 25.5%: Կիսամյակի ընթացքում 1.4 տոկոսային կետով աճել է նաև փողի զանգվածի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը և կիսամյակի վերջին կազմել 30.9%:

Տարեսկզբի համեմատ՝ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը նվազել է 1.3 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 74.8%: Վերջինս պայմանավորված է 1 բանկում բաժնետերերի մասնաբաժինների փոփոխությամբ:

Հաշվետու կիսամյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 3.9%-ով (13.8 մլրդ դրամով), իսկ ընդհանուր ակտիվները՝ 8.4%-ով (174.3 մլրդ դրամով): Արդյունքում՝ ընդհանուր կապիտալ / ընդհանուր ակտիվներ հարաբերակցության ցուցանիշը (լեերիջի ցուցանիշ) նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել 16.5%:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.09	31.12.10	31.12.11	30.06.12
Ընդհանուր ակտիվներ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.07	0.07	0.07	0.07
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.06	0.06


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ըստ Հերֆինդալ-Հիրշմանի՝ տարբեր ամփոփ բնութագրիչների (ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ, վարկեր, ավանդներ) գործակիցների²¹ համակարգի կենտրոնացվածությունը պահպանվել է ցածր մակարդակի վրա, ինչը սահմանափակում է ֆինանսական կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի ազդեցության հավանականությունը:

Տարեսկզբի համեմատ՝ Հայաստանում գործող 21 առևտրային բանկերից 4 խոշորագույն բանկերի ակտիվների և պարտավորությունների մասնաբաժինները աճել են համապատասխանաբար 1.5 և 1.7 տոկոսային կետերով և կիսամյակի վերջին կազմել 39.3% և 39.8%: Ի տարբերություն ակտիվների և պարտավորու-


²¹ Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0 - 1 միջակայքում և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Ֆինանսական միջնորդության մակարդակը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կապիտալում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ընդհանուր բանկային համակարգում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

թյունների մասնաբաժինների՝ 4 խոշորագույն բանկերի կապիտալի մասնաբաժինը համակարգում նվազել է 0.5 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 37.8%:


Վարկային ներդրումների տարեկան աճը



Աղբյուրը՝ ԱՄՀ:


Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները

մլրդ ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում



Աղբյուրը՝ ԱՄՀ:

4.1.2. Վարկային ռիսկ

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 18.7%-ով և կիսամյակի վերջին կազմել 1 տրլն 437.4 մլրդ դրամ: Չնայած հաշվետու կիսամյակում ևս արձանագրվել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշի զգալի աճ, այնուամենայնիվ ֆինանսական միջնորդության (վարկեր/ ՀՆԱ ցուցանիշ) ներկայիս մակարդակը Արևելյան Եվրոպայի երկրների բանկային համակարգերի համեմատ դեռևս ցածր է: Այս համատեքստում, տնտեսական աճի, բնակչության եկամուտների շարունակական աճի և վարկավորման ընթացակարգերի հետագա դյուրինացման պարագայում, կարող է դիտարկվել վարկավորման հետագա ընդլայնում և ֆինանսական միջնորդության խորացում:

Հաշվետու կիսամյակում բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը 10.3 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում ավելացել է 5.6 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 64.1%:

Տարեսկզբի համեմատ՝ չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» ռիսկային դաս ունեցող վարկեր) տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 4.3%: Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է գյուղատնտեսության, առևտրի, ինչպես նաև հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներին տրամադրված վարկերում՝ համապատասխանաբար 5.9%, 5.8% և 5.5%:

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում, հաշվարկված ԱՄՀ մեթոդաբանության համաձայն²², աճել է 1.4 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 6.8%:

Ըստ վարկավորման սուբյեկտների՝ տնտեսությանը տրամադրված վարկերի կառուցվածքում հաշվետու կիսամյակի ընթացքում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Իրավաբանական անձանց վարկերի տեսակարար կշիռը շարունակել է տատանվել 60%-ի շրջանակներում (դեռևս 2009 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բանկերը վերափնաստավորել էին վարկային քաղաքականությունը՝ առաջնայնությունը տալով տնտեսական աճի ապահովմանը նպաստող՝ իրավաբանական անձանց վարկավորմանը): Տարեսկզբի համեմատ վարկավորման աճ գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ ֆինանսական հատվածին տրամադրված վարկերի: Առավել բարձր է եղել գյուղատնտեսության, արդյունաբերության և սպառողական վարկերի աճի տեմպը՝ համապատասխանաբար

²² Ըստ ԱՄՀ մեթոդաբանության՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում հաշվարկվում է որպես «ոչ ստանդարտ», «կասկածելի» և «անհուսալի» դասերին պատկանող վարկերի և ընդհանուր վարկերի հարաբերություն:

27.4%, 26.0% և 18.7%: 30.06.2012 թ. դրությամբ վարկային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ են ունեցել արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկերը՝ համապատասխանաբար 22.7%, 21.9% և 17.4%:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային ներդրումների շերտի հինգերորդ մասը ինդեքսը մնացել է անփոփոխ և կիսամյակի վերջին կազմել 0.11՝ վկայելով վարկային ներդրումների բաշխվածության չափավոր կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը՝ ըստ բանկերի միջինի, նույնպես չի փոփոխվել և 30.06.2012 թ. դրությամբ կազմել է 0.17՝ վկայելով որոշ բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ հաշվետու կիսամյակի ընթացքում ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների և կիսամյակային միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը աճել է 0.5 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 0.8%:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի²³ արդյունքների համաձայն՝ բանկային համակարգի հնարավոր կորուստի մեծությունը, տարեսկզբին իրականացված նույն սթրես-թեստերի արդյունքների համեմատ, փոքր-ինչ աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է նորմատիվային ընդհանուր կապիտալի նկատմամբ վարկային պորտֆելի առաջանցիկ աճի տեմպով:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ²⁴

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	12.7 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 3.6%-ը	3.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.9%-ը	45.4 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 12.9%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի իրականացման դեպքում	16.3%	16.7%	15.0%


Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Դիտարկվող վատագույն սցենարներում, երբ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվը կազմում է 15.0%, որոշ բանկերում արձանագրվում է կապիտալի համարժեքության նորմատիվի խախտում: Այնուամենայնիվ, նույնիսկ խախտման դեպքում, վերջիններիս կապիտալի համարժեքու-

²³ Սթրես-սցենարները կառուցված են բանկերի վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման ենթադրությունների պայմաններում (ըստ որոնց՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում չի դիտարկվում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը):


²⁴ Հաշվետվությունում ներկայացված այս և հաջորդ սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում




Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:


Վարկերի կորուստների դիմամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը



Վարկային պորտֆելի կորուստը

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 30.06.2012թ. դրությամբ



1. Վարկային ռիսկ,
2. Տոկոսադրույքի ռիսկ,
3. Գործառնական ռիսկ,
4. Արտարժույթային ռիսկ,
5. Կապիտալի գործիքների գնային ռիսկ:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


թյան նորմատիվային ցուցանիշները գտնվում են նվազագույն սահմանաչափին մոտ, և հնարավոր վնասները նշանակալի բացասական ազդեցություն չեն կարող թողնել ՀՀ ֆինանսական կայունության վրա:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը մինչև շոկային իրավիճակը	16.81%
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը շոկային իրավիճակից հետո	16.6%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների²⁵ կատարումից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքներով՝ որևէ բանկ չի խախտում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջը, ըստ որի՝ հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող վարկային ռիսկը գտնվում է կառավարելի շրջանակներում:

ՀՀ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


4.1.3. Իրացվելիության ռիսկ

2012 թ. առաջին կիսամյակում բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի արագընթաց աճի պայմաններում դրսևորվել է իրացվելիության նվազման միտում: Այնուամենայնիվ, կիսամյակի ընթացքում իրացվելիության մակարդակը եղել է սահմանված նորմատիվային նվազագույն սահմանաչափերից բավականին բարձր մակարդակում: Տարեսկզբի համեմատ՝ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվները նվազել են համապատասխանաբար 3.6 և 2.6 տոկոսային կետերով և կիսամյակի վերջին կազմել 24.4% և 118.1%²⁶:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետային խմբերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն 181-365 օր մարման ժամկետային խմբում է առկա որոշակի բացասական ճեղքվածք՝ 75.1%: Մինչև 180 օր (ցպահանջ), 13 տարի և 3 տարի և ավելի մարման ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 92.2%, 170.1% և 169.7%:

Հաշվի առնելով, որ մինչև 180 օր (ներառյալ՝ ցպահանջ) մարման ժամկետային խմբում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշը պատմականորեն տատանվել է 90 - 95%-ի շրջանակներում, կարելի է եզրակացնել, որ ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների

Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին՝ ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

²⁵ Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները ներառում են վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:

²⁶ Ընդհանուր իրացվելիության նորմատիվը հաշվարկվում է որպես բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն, ընթացիկ իրացվելիության նորմատիվը՝ բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն, պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%:

մոտենալուն զուգընթաց, բանկերը նոր պայմանագրերի միջոցով կարողանում են շտկել փոքր բացասական ճեղքվածքը: Այս համատեքստում 181-365 օր մարման ժամկետային խմբում ակտիվների և պարտավորությունների բացասական ճեղքվածքի հետագա ազդեցությունը ֆինանսական կայունության վրա թույլ է գնահատվում:

Առևտրային բանկերի արտաքին վարկային պարտավորություններն ավելացել են 22.1%-ով: Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներն ավելացել են 21.6%-ով՝ կազմելով ընդհանուր արտաքին վարկային պարտավորությունների 31.8%-ը:

Առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են՝ Ռուսաստանը՝ 21.9%, Լյուքսեմբուրգը՝ 9.1%, Գերմանիան՝ 6.3%, ԱՄՆ-ն՝ 4.0%, Ֆրանսիան՝ 4.0%, Նիդեռլանդները՝ 4.0%: Երկարաժամկետ պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 89.7%, ինչը գրեթե բացառում է այդ պարտավորությունների վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:

Բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացումների տեսանկյունից՝ ռիսկերի փոքր-ինչ աճ է գրանցվել. ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունները²⁷ տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 27.4%:

Իրացվելիության ռիսկի գնահատման սրբես-սցենարներ


30.06.2012 թ.	Դիտարկվող սրբեսային սցենարներ		
	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 20%-ի մարում	Ցպահանջ միջոցների 20%-ի մարում	Ցպահանջ միջոցների 20%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 20%-ի մարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	20.4%	21.1%	16.8%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	94.0%	122.3%	92.5%

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Դիտարկվող վատագույն շոկային իրավիճակներում, երբ բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները կազմում են համապատասխանաբար 16.8% (պահանջվող նվազագույնը՝ 15%) և 92.5% (պահանջվող նվազագույնը՝ 60%), որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվների խախտումներ: Այնուամենայնիվ, իրացվելիության նորմատիվներ խախտող բանկերի բարձր իրացվելի ակտիվները ամբողջությամբ բավարար են պարտավորությունների արտահոսքը ծածկելու համար: Այս համատեքստում, ֆինանսական համակարգի կայունության տեսանկյունից, իրացվելիության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը շարունակում է մնալ փոքր:


²⁷ Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող բանկերի քանակը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

31.12.2011 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ ընդհանուր ակտիվներ	21.7%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցախահանջ պարտավորություններ	105.3%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկվող սցենարում բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների մեծությունները շարունակում են մնալ նվազագույն սահմանաչափերից զգալի բարձր:

4.1.4. Շուկայական ռիսկ


Արտարժույթային ռիսկ

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է 1.9 մլրդ դրամի վնաս, ընդ որում՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 11 բանկ, իսկ օգուտ՝ 10 բանկ: Բանկային համակարգը արտարժույթի առուվաճառքի գործառնություններից ապահովել է 5.9 մլրդ դրամ զուտ եկամուտ:

Տարեսկզբի համեմատ՝ արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և արտարժույթային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել են համապատասխանաբար 2.8 և 1.2 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 65.6% և 69.9%:

Հաշվետու կիսամյակի վերջին բանկային համակարգի արտարժույթային զուտ դիրքը (ածանցյալ գործիքները ներառյալ) կազմել է բացասական 531.2 մլն դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.2 %-ը (31.12.2012 թ. դրությամբ՝ բացասական 3.1 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.9%-ը):

Բանկային համակարգի՝ արտարժույթի առջ ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ


30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի՝ յուրաքանչյուր 1%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի՝ յուրաքանչյուր 1%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	15.3 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.004%-ը (15.3 մլն դրամ)	-1.8 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.001%-ը (1.8 մլն դրամ)	59.7 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.02%-ը

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստում²⁸ դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարների դրսևորման դեպքում արտարժութային ռիսկից բանկերի կորուստները նշանակալի չեն, և ֆինանսական կայունության խոցելիության վրա դրանց ազդեցությունը թույլ է:

Տոկոսադրույքի ռիսկ

Հաշվետու կիսամյակում ևս նվազել են ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Հատկապես արտահայտված է եղել արտարժութային վարկերի տոկոսադրույքների նվազումը՝ պայմանավորված բանկերի՝ արտարժութային վարկերի նկատմամբ պահանջարկի խթանմամբ, քանի որ պարտավորություններում գերակշռել են արտարժութային միջոցները: Դրամային և արտարժութային վարկերի տոկոսադրույքների նվազմանը էականորեն նպաստել է նաև համեմատաբար խոշոր բանկերի միջև մրցակցության խորացումը՝ հանգեցնելով տոկոսադրույքների սպրեդի նվազմանը:

Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2012 թ.	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված «դյուրացիայի մեթոդով»	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի՝ սպասվող եկամտից շեղում գնահատված «տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով»
Բանկային համակարգի օգուտ/վնաս	1.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.5%-ը (-1.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.5%-ը)	95.8 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.03%-ը (-95.8 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.03%-ը)

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքի միջին կշռված ժամկետայնության (դյուրացիա) ճեղքվածքը գրեթե փակ է և տատանվում է մեկ ամսվա շրջանակում, ինչը բնութագրում է, որ 2012 թվականին շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումները բանկային համակարգին զգալի վնասներ չեն պատճառի:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման վատատեսական սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ ըստ առանձին բանկերի շուկայական տոկոսադրույքի տատանումների արդյունքում հնարավոր կորուստները կապիտալի նկատմամբ տատանվում են միջինում 2.0%-ի շրջանակներում: Այս համատեքստում շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում բանկային համակարգի հնարավոր վնասները նշանակալի չեն, և դրանց ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է ոչ խոցելի:

²⁸ Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկման հիմքում բանկերի արտարժութային դիրքերն են՝ 30.06.2012 թ. դրությամբ:


Գնային ռիսկ

Հաշվետու կիսամյակում ևս բանկային համակարգի գնային ռիսկը գնահատվել է բավականին ցածր: Տարեսկզբի համեմատ, բանկային համակարգի՝ առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում նվազել է 1.5 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 4.7%:

Անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում: ՀՀ տարածքում գործող բանկերը շարունակել են հիփոթեքային վարկեր հիմնականում տրամադրել անշարժ գույքի շուկայական արժեքի 60 - 80%-ից ոչ ավելի (Loan to Value ratio), կիրառել վարկառուների վարկունակության գնահատման բավականին խիստ նոտեցում: Բանկերի կողմից ընդունված վերոնշյալ սահմանափակումները էականորեն զսպում են անշարժ գույքի գների անկումից հնարավոր վարկային կորուստների ռիսկը:

Անշարժ գույքի 30% արժեզրկման սթրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի հնարավոր առավելագույն կորուստները (գնային և վերջինիցս ածանցված վարկային ռիսկերի տեսանկյունից) աճի միտում ունեն՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ հիփոթեքային վարկերի առաջանցիկ աճի տեմպով: Այնուամենայնիվ, անշարժ գույքի գների տատանողականությունը մեծ չէ ու դրանից բխող վարկային ռիսկի և գնային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ոչ խոցելի:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ

Անշարժ գույքի 30% արժեզրկման սցենար	30.06.2012 թ.
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերագնահատմամբ (գնային ռիսկ)	9.2 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի՝ 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավարկված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	5.2 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 1.5%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի՝ 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավարկված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	17.4 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 4.9%-ը)


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի (30.06.2012 թ. դրությամբ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը և շահութաբերությունը, Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համեմատությամբ, բավականին բարձր են, որը բանկային համակարգին հնարավորություն է ընձեռում ռիսկերը չեզոքացնելու սեփական միջոցների հաշվին: Հաշվետու կիսամյակի ընթացքում

²⁹ Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարի մեծությունն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավարկված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

բանկային համակարգի ընդհանուր նորմատիվային կապիտալը աճել է 4.1%-ով և կիսամյակի վերջին կազմել 352.9 մլրդ դրամ: Տարեսկզբի համեմատ՝ ընդհանուր նորմատիվային կապիտալում նորմատիվային հիմնական կապիտալի տեսակարար կշիռն աճել է 0.3 տոկոսային կետով և 30.06.2012 թ. դրությամբ կազմել 91.4%՝ վկայելով ընդհանուր նորմատիվային կապիտալի բարձր որակի մասին:

Ակտիվ վարկային քաղաքականության արդյունքում 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ևս բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպը գերազանցել է նորմատիվային ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը տարեսկզբի համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 16.8% (պահանջվող նվազագույնը՝ 12%):

Բանկերը շարունակաբար պահպանել են կապիտալացման բարձր մակարդակ, և բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը կիսամյակի ընթացքում պահպանվել է նվազագույն սահմանաչափից բարձր:

Ի հաշիվ ակտիվ վարկային քաղաքականության և վարկային պորտֆելի համեմատաբար բարձր որակի՝ բանկերին հաջողվել է ապահովել բավարար շահութաբերություն: Հաշվետու կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը՝ հաշվարկված Կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան,³⁰ կազմել է 15.4 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով են աշխատել 17, իսկ վնասով՝ 4 բանկ:

Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE) կազմել են համապատասխանաբար 1.5% և 8.4%:


Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ հաշվետու կիսամյակում բանկային համակարգի համախառն եկամուտներն ավելացել են 30.1%-ով և կազմել 175.5 մլրդ դրամ, իսկ համախառն ծախսերը՝ 40.5%-ով և կազմել 155.5 մլրդ դրամ:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ բանկային համակարգի եկամուտների կառուցվածքում ավելացել են տոկոսային եկամուտների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.0 և 1.4 տոկոսային կետով: Ծախսերի կառուցվածքում 5.7 տոկոսային կետով աճել է ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումների տեսակարար կշիռը, իսկ տոկոսային ծախսերի և ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.5 և 5.2 տոկոսային կետով:


Հաշվետու տարվա առաջին կիսամյակում բանկային համակարգի շահույթը՝ հաշվարկված ըստ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ), կազմել է 17.0 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմել է 1.6%, իսկ շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE)՝ 9.3%:

³⁰ Տարբերվում է ՖՀՄՍ-ից հիմնականում ստանդարտ ակտիվների գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների մասով:


Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշներ




Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում



Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում



Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը



4.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի երկրորդ խոշոր հատվածը վարկային կազմակերպություններն են, որոնց ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 6.1%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում վարկային կազմակերպություններն ապահովել են ակտիվների, պարտավորությունների և կապիտալի աճ:

Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները


(հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշ	31.12.2011	30.06.2012	Աճ (%)
Ակտիվներ	123,850,974	151,124,546	22.0
Պարտավորություններ	77,006,457	99,690,038	29.5
Կապիտալ	46,844,518	51,434,058	9.8
Զուտ շահույթ	4,930,540 (տարեկան)	2,283,041 (կիսամյակային)	X

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի

մլրդ ՀՀ դրամ



Բանկային համակարգի համեմատ՝ վարկային կազմակերպությունների կապիտալացումը և շահութաբերությունն ավելի բարձր են և, ըստ տարբեր սթրես-սցենարների, վարկային կազմակերպությունները ունակ են չեզոքացնելու հնարավոր ռիսկերը: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 3.8 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 34.0 %:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում շահույթով աշխատել է 27 վարկային կազմակերպություն, վնասով՝ 5 կազմակերպություն: Վարկային կազմակերպությունների՝ ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) համապատասխանաբար կազմել են 3.4% և 9.5%:

Վարկային կազմակերպությունների շահույթը, հաշվարկված ըստ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), կազմել է 2.8 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) կազմել են համապատասխանաբար 4.2 % և 11.6%:

Վարկային կազմակերպությունների չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» դասի վարկեր) տեսակարար կշիռը աճել է 0.9 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 3.4 %: Վարկերի ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է տրանսպորտի և կապի, հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին տրամադրված ու հիփոթեքային վարկերում, համապատասխանաբար՝ 15.3%, 14.6 % և 8.1%:

Չաշխատող վարկերի կշիռը՝ հաշվարկված ԱՄՀ մեթոդաբանությամբ («ոչ ստանդարտ», «կասկածելի», «անհուսալի» դասի վարկեր), տարեսկզբի համեմատ աճել է 1.3 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 5.2 %:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, հաշվետու կիսամյակի ընթացքում ակտիվների հնարավոր կորստի պահուստներին կատարված զուտ մասհանումների մեծության և միջին կիսամյակյին ընդհանուր ակտիվների մեծության հարաբերակցությունը նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 1.3%:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ ³¹

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասի մեծությունը	799.6 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 1.9%-ը	371.3 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.9%-ը	3.7 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 9.1%-ը

Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:


Իրացվելիության տեսանկյունից՝ ակտիվների և պարտավորությունների բոլոր ժամկետային զանբյուղներում (մինչև 180 օր /ներառյալ՝ ցպահանջ/, 180 օրից մինչև մեկ տարի, 1 տարուց ավելի) ակտիվների ծավալները գերազանցել են պարտավորությունների ծավալները՝ վկայելով, այլ հավասար պայմաններում, վարկային կազմակերպությունների իրացվելիության ցածր ռիսկի մասին:

4.3. ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցել են 9 ապահովագրական ընկերություններ³²:

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ֆինանսական համակարգում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը աճել է 0.2 տոկոսային կետով՝ 30.06.2012 թ. դրությամբ կազմելով ֆինանսական համակարգի ակտիվների 1.6%-ը: Կիսամյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 24.5%-ով և 30.06.2012 թ. կազմել 39.1 մլրդ դրամ, պարտավորություններն ավելացել են 48.3%-ով՝ կազմելով 25.9 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը նվազել է 5.3%-ով՝ կազմելով 13.2 մլրդ դրամ: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2012 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 52.3%-ով և կազմել 23.8 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին կիսամյակում նշված ցուցանիշի աճը կազմել էր 227.0%): Եթե նախորդ տարվա առաջին կիսամ-

Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 30.06.2012թ. դրությամբ




1. Ավանդներ բանկերում,
2. Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով,
3. Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ,
4. Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր,
5. Վերաապահովագրողի բաժինը ապահովագրական պահուստներում,
6. Պետական և ոչ պետական արժեթղթեր,
7. Հիմնական միջոցներ,
8. Բանկային հաշիվներ,
9. Տրամադրված փոխառություններ,
10. Այլ ակտիվներ

Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:


³¹ Սթրես-սցենարները կառուցված են վարկային կազմակերպությունների վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման վարկածով (ըստ որի վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում չի դիտարկվում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը):

³² 30.06.2012 թ. դրությամբ ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:


ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները



Ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2011թ.)



Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները



յակի աճը պայմանավորված էր ԱՊՊԱ համակարգի ներդրմամբ, ապա այս տարվա նույն ժամանակահատվածի աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության համակարգի ներդրմամբ: Համակարգը ստեղծված է հատուկ ՀՀ պետական ծառայողների համար և ֆինանսավորվում է պետության կողմից: Սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրությունը հնարավորություն է տալիս պետական կազմակերպությունների աշխատակիցներին ապահովագրավճարների դիմաց ապահովագրական ընկերություններից ստանալու բժշկական փոխհատուցումներ ՀՀ և ԼՂՀ ցանկացած բուժհաստատությունում: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ «Ապահովագրավճարներ / ՀՆԱ» հարաբերակցությունը³³, 30.06.2012 թվականին կազմել է 0.79%՝ 31.12.2011 թվականի համեմատ աճելով 0.2 տոկոսային կետով³⁴: Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը 2012 թվականի հունիսին կազմել է 9950 դրամ՝ 2011 թվականի դեկտեմբերի 6834 դրամի փոխարեն (նշված ցուցանիշը հիմնականում զիջում է զարգացած և զարգացող երկրների միջին ցուցանիշներին)³⁵:

ԱՊՊԱ համակարգի, ինչպես նաև սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության համակարգի ներդրման արդյունքում մեծացել է ապահովագրական շուկայի ակտիվության մակարդակը, սակայն ընդհանուր ապահովագրական շուկայի կշիռը ֆինանսական համակարգում շարունակում է մնալ փոքր: Ապահովագրական ընկերությունների ռիսկերը վերահսկելի շրջանակներում են և ֆինանսական կայունության տեսանկյունից խոցելի չեն. մասնավորապես՝

- 2012 թվականի առաջին կիսամյակում ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշը, նախորդ տարվա համեմատ, աճել է և կազմել 61.9%³⁶՝ վկայելով ապահովագրական համակարգի տեխնիկական արդյունավետության աճի մասին: Ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշի աճը զուգակցվել է ծախսատարության ցուցանիշի նվազման հետ, որը 2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել է 36.1%³⁷՝ վկայելով ապահովագրական համակարգի գործառնական արդյունավետության աճի մասին:
- Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռերը կազմել են համապատասխանաբար 42.1% և 57.9%: Կապիտալի համարժեքության նորմատիվը 30.06.12թ. դրությամբ կազմել է 126.6%:

³³ «Ապահովագրավճարներ / ՀՆԱ» հարաբերակցությունը հաշվարկվել է նախորդող 4 եռամսյակների տվյալների հիման վրա:
³⁴ 2011 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով «Ապահովագրավճարներ / ՀՆԱ» ցուցանիշը միջինում կազմել է 3.57%, զարգացող երկրներում՝ 1.30% (աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 3/2012, մայիս 2012 թ.):
³⁵ Աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 3/2012, մայիս, 2012 թ.:
³⁶ Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ հատկացումներ տեխնիկական պահուստներին / բացառությամբ ՉԱՊ / + այլ գործառնական ծախսեր ապահովագրության գծով) / (վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով վերադարձվող գումարներ):
³⁷ Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր / (վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով վերադարձվող գումարներ):

Վճարունակության ռիսկ

Գնահատվել է, որ ստորև դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների դրսևորման դեպքում ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակը զգալի փոփոխությունների չի ենթարկվի, և ապահովագրական համակարգի՝ ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկերի առաջացման հավանականությունը փոքր է:

Վճարունակության գնահատման սթրես-սցենար

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	Հատուցումների հաճախականության աճ՝ 20% և գների աճ՝ 5%
Ապահովագրական համակարգի չվատասակած ապահովագրավճարների պահուստի (ԶԱՊ-ի) անհրաժեշտ աճ սթրես-սցենարի իրականացման դեպքում	2.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 20.8%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի իրականացման դեպքում	100.2%

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների (հատուցումների հաճախականության աճ՝ 20% և հատուցվող գումարների աճ՝ 5%) դրսևորման դեպքում գնահատվել է ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակի փոփոխությունը:

Վարկային ռիսկ

Ապահովագրական համակարգի միջոցների տեղաբաշխումը ցածր ռիսկային ակտիվներում հնարավորություն է տալիս ներդրումային ռիսկը պահպանելու ցածր մակարդակի վրա: Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բանկային ժամկետային և ցպահանջ ավանդներում, ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերում:


Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	Ստանդարտ դասի ակտիվների 30%-ի դասակարգում հսկվող դասի	Ստանդարտ դասի ակտիվների 5%-ի դասակարգում անհուսալի դասի	ՆԶՊՊ շոկային աճ 50%
Ապահովագրական համակարգի վնասի մեծությունը	713.5 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 5.9%-ը	1.3 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 10.8%-ը	0.9 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 7.4%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի իրականացման դեպքում	120.3%	114.9%	117.3%

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ ապահովագրական համակարգի հնարավոր կորստի մեծությունը վերահսկելի շրջանակներում է:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության կառուցվածքը 30.06.2012թ. դրությամբ



1. ՎՊՄ (Վճարունակության պահանջվող մեծություն),
2. Վարկային ռիսկ,
3. Արտարժույթային ռիսկ,
4. Գործառնական ռիսկ:

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստում դիտարկվող սթրես-սցենարների դրսևորման դեպքում գնահատվել է, որ արտարժութային ռիսկից ապահովագրական ընկերությունների կորուստները նշանակալի չեն:

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ³⁸

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ԴՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ԴՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Ապահովագրական համակարգի օգուտը / վնասը արտարժույթի վերագնահատման դեպքում	50.4 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.4 %-ը (62.6 մլն)	1.5 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.01%-ը (5.5 մլն)	64.9 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.5 %-ը

Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

Իրացվելիության ռիսկ

Ապահովագրական համակարգի իրացվելիության ռիսկի մակարդակը ցածր է, ինչի մասին վկայում է նաև սթրես-սցենարի արձանագրած արդյունքը:

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

30.06.2012 թ.	Դիտարկվող սթրեսային սցենար
	ՆՉՊՊ շուկային աճ 50%
Ապահովագրական համակարգի ՆՉՊՊ-ի անհրաժեշտ աճ սթրես-սցենարի իրականացման դեպքում	0.9 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 7.4%-ը
Ապահովագրական համակարգի իրացվելիությունը սթրես-սցենարի իրականացման դեպքում	299.5%

Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

4.4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ ԴՀ արժեթղթերի շուկայում գործել է ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն:

2012 թվականի առաջին կիսամյակում, տարվա վերջի համեմատ, ներդրումային ընկերությունների ակտիվներն ավելացել են 4.1%-ով՝ կազմելով 22.7 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը նվազել է 2.5%-ով՝ կազմելով 3.1 մլրդ դրամ: 30.06.2012 թ. դրու-

³⁸ Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկման հիմքում ապահովագրական ընկերությունների արտարժութային դիրքերն են՝ 31.12.2011 թ. դրությամբ:


թյամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 4 մլն դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 4-ը, իսկ 4 ընկերություն կիսամյակն ավարտել է վնասով:

2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ ներդրումային ընկերությունների վարկային ռիսկը կազմել է ռիսկով կշռված ակտիվների 55%-ը, շուկայական ռիսկը՝ 43%-ը, իսկ գործառնական ռիսկը՝ 2%-ը: Ներդրումային ընկերությունների շուկայական ռիսկի կառուցվածքում գերակշռել է տոկոսադրույքի ռիսկը՝ կազմելով 61%, արտարժույթային և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը կազմել են համապատասխանաբար 39% և 1%:

2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ կարգավորվող շուկայում առուվաճառքին թույլատրված են եղել թվով 14 թողարկողների 17 արժեթղթեր, ընդ որում՝ թողարկողներից 4-ը ֆինանսական կազմակերպություններ են, որոնց բաժին է ընկել թողարկված բաժնային արժեթղթերի 24%-ը: Բաժնետոմսերի ընդհանուր ծավալը 52.9 մլրդ դրամ է, իսկ պարտատոմսերինը՝ 3.5 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով:

Կիսամյակի վերջի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում գրանցված անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողները 1641 ընկերություններ են, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերը՝ 92024 մարդ: ՀՀ արժեթղթերի շուկայում, բացի ՀԿԴ-ից, արժեթղթերի թողարկողներին ռեեստրի վարման ծառայություն են մատուցել նաև ներդրումային ծառայություն մատուցող երկու անձինք, որոնք 2012 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ իրականացրել են 381 ընկերությունների և 29122 սեփականատեր անձանց ռեեստրի վարումը:

Ներդրումային ընկերությունների ռիսկով կշռված ակտիվներում ռիսկերի կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ



1. Վարկային ռիսկ
2. Շուկայական ռիսկ
3. Գործառնական ռիսկ

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

4.5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի այլ մասնակիցներ են համարվում ՀՀ տարածքում գործող 129 գրավատներ (առանց մասնաճյուղերի), արտարժույթի առուվաճառք իրականացնող 225 ընկերություններ (առանց մասնաճյուղերի), ապահովագրական բրոքերային 3 կազմակերպություններ, վճարահաշվարկային 7 ընկերություններ: Դրանց գործունեության հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է շատ ցածր, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվներում ունեցած տեսակարար կշիռը անհամեմատ փոքր է:

ԱՍՓՈՓՈՒՄ

2012 թվականի առաջին կիսամյակում ֆինանսական համակարգում շարունակել են գերակշիռ դիրք պահպանել բանկային հաստատությունները, իսկ մյուս մասնակիցները ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն չեն ունեցել: Հաշվետու կիսամյակում ևս, մակրոտնտեսական դրական զարգացումներին զուգընթաց, բանկերը շարունակել են ակտիվ վարկային քաղաքականությունը: Վերջինիս արդյունքում նվազել են կապիտալի

համարժեքության և իրացվելիության ցուցանիշները: Այնուամենայնիվ բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշների փաստացի մեծությունները գտնվել են նվազագույն սահմանաչափերից բավականին բարձր մակարդակում:

Ընդհանուր առմամբ, դրական զարգացումների ներքո, ֆինանսական համակարգի ստանձնած ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունը և ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և երկրի ֆինանսական կայունության վրա³⁹ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին և դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:

Միջբանկային հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնականում կատարվում են Կենտրոնական բանկի համակարգերով⁴⁰: Հայաստանում իրականացվող միջբանկային վճարումների ծավալի 99%-ից ավելին իրականացվում է Կենտրոնական բանկի համակարգերով:

5.1. ՀՀ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ

2012 թ. առաջին կիսամյակում Կենտրոնական բանկի համակարգերով համախառն վճարումների 24%-ը կատարվել է Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ): ԷՎՀ վճարումների տեսակարար կշիռը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 13 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է հիմնականում Թղթային եղանակով համախառն վճարումների համակարգով (այսուհետ՝ ԹՀՎՀ) իրականացվող՝ ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով (հիմնականում դրամական միջոցների ներգրավման և ռեպո) գործարքների վճարումների ծավալների զգալի (50%) աճով:

ԷՎՀ գործունեության մշտադիտարկման (մոնիթորինգ) շրջանակներում արձանագրված ցուցանիշները վկայում են, որ համակարգն անվտանգ է և կայունության տեսակետից հիմնախնդիրներ չի ստեղծում: Համակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

Վարկային ռիսկ


Համակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկի) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ միջոցների անբավարարության դեպքում մասնակիցների վարկավորման մեխանիզմ չի գործում: Մինևույն ժամանակ, բացակայում է նաև ստացող կողմի վարկային ռիսկը, քանի որ վերջինս տեղեկանում է իրեն հասցեագրված վճարման մասին միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո⁴¹:

³⁹ Մանրամասն տես 2007 թ. «Ֆինանսական կայունության հաշվետվություն» և «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» հրապարակումները:

⁴⁰ ՀՀ ԿԲ համակարգերով վճարումները ներառում են՝ էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ ԷՎՀ)՝ առանց բորսայական գործառնությունների մեծության, և Թղթային եղանակով համախառն վճարումների համակարգով (այսուհետ՝ ԹՀՎՀ) վճարումները, ինչպես նաև Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով արժեթղթերով գործառնությունների դրամային հաշվարկների հետ կապված վճարումները (այսուհետ՝ ՊԱՀՀ): ՀՀ վճարահաշվարկային բնագավառի, այդ թվում՝ համակարգերի վերաբերյալ մանրամասն կարելի է տեղեկանալ «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումից:


⁴¹ Մանրամասն տես 2007 թ. «Ֆինանսական կայունության հաշվետվություն» և «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» հրապարակումները:

Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

Իրացվելիության ռիսկ

2012 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի⁴² դրական միտում (2012 թ. I կիսամյակ՝ 1.96, 2011 թ.՝ 1.61):

Համակարգում օրվա սկզբում միջին իրացվելիությունը մշտապես գերազանցել է միջին օրական վճարումները: Ավելին՝ օրվա սկզբում իրացվելիության աճի տեմպն ավելի մեծ է եղել, քան միջին օրական վճարումների աճի տեմպը:

2012 թ. առաջին կիսամյակում իրականացվել է նաև նպատակային վերլուծություն, որի ընթացքում վերոնշյալ ցուցանիշները դիտարկվել են նաև ըստ յուրաքանչյուր բանկի: Գնահատման արդյունքները վկայում են, որ հաշվետու ժամանակաշրջանում բանկերը միջինում զգալիորեն ավելի շատ իրացվելիություն են ունեցել օրվա սկզբում, քան նրանց անհրաժեշտ է եղել օրվա ընթացքում իրենց վճարումների ապահովման համար:

Վերը նշված ցուցանիշի տեսակետից իրացվելիության ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն բանկերի հանդիպակաց ստացումները (հաշվին կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները:

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կարևոր չափանիշներ են նաև համակարգում գրանցված մերժումները և դրանց տեսակարար կշիռը համակարգով կատարվող ընդհանուր վճարումներում:

Չնայած էՎՀ-ով կատարվող փոխանցումներում ոչ բավարար իրացվելիության պատճառով մերժումների ծավալային ցուցանիշը նախորդ կիսամյակի համեմատ մոտ 4 անգամ աճել է, սակայն այդ մերժումների տեսակարար կշռի փոքր արժեքը էՎՀ վճարումների թե՛ քանակում (2012 թ. I կիսամյակ՝ 0.005%, 2011 թ.՝ 0.005%), թե՛ ծավալում (2012 թ. I կիսամյակ՝ 1%, 2011 թ.՝ 0.4%) փաստում է, որ մերժումների ծավալային ցուցանիշի վերը նշված աճը կարող է պայմանավորված լինել պարզապես մեկ կամ մի քանի բանկի կողմից մեկ կամ մի քանի օրվա ընթացքում իրացվելիության (վճարային հոսքերի) ոչ ճիշտ կառավարմամբ, ինչը չէր կարող անդրադառնալ համակարգի իրացվելիության վրա:

Ելնելով կատարված վերլուծություններից՝ համակարգում իրացվելիության ռիսկի և համակարգային խնդիրների առաջացման հավանականությունը գնահատվել է շատ փոքր:

Վճարումների ժամային բաշխվածությունը

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում միջին եռամսյակային վճարումների ծավալի և քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում փոխվել է:

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ պիկ ժամը գրանցվում էր օրվա վերջում, հաշվետու ժամանակաշրջանում այն տեղափոխվել է ժամը 10:00 - 11:00՝ ծավալային ցուցանիշով (35%), քանակային՝ (18%): Կտրուկ նվազել են նաև ժամը 16:00-ից հետո

⁴² Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ԴԴ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբում առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես - իրավիճակի վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը. այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների՝ կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն), և ըստ առանձին բանկերի ցուցանիշները կարող են տարբերվել:

կատարվող վճարումները, ինչը դրական միտում է, քանի որ օրվա վերջում վճարումների կուտակումները, համապատասխան իրացվելիության անբավարարության կամ համակարգում գործառնական խախտումների դեպքում, կարող են հանգեցնել օրվա վճարումների գերակշիռ մասի մերժման կամ հետաձգման առաջացնելով համակարգային ռիսկեր:

Օրվա սկզբի այս ժամերին կուտակումների հնարավոր բացասական ազդեցությունը գնահատելու համար կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ համակարգի բավարար թողունակության և գործառնական խնդիրների բացակայության շնորհիվ համակարգում էական խնդիրներ չեն առաջացել: Հաշվի առնելով նաև իրացվելիության և հասանելիության ցուցանիշների դրական արդյունքները, ինչպես նաև մերժումների աննշան կշիռը ընդհանուր վճարումներում (մանրամասն տես նախորդ ենթաբաժինները)՝ 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում վճարումների անհավասարաչափ բաշխումը և օրվա որոշակի ժամերին կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի առաջացման հավանականությունը ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

Համակարգի թողունակությունը

ԷՎՀ-ում վճարումների առավելագույն քանակը 2012 թ. առաջին կիսամյակում կազմել է ժամում 6097 վճարում (2011 թ.՝ 5420 վճարում):

Հաշվետու ժամանակաշրջանում վճարումների ամսական առավելագույն մեծությունները գերազանցել են 5000-ը: Նկատվում է նաև ժամում 4300-ը գերազանցող վճարումների ցուցանիշի որոշակի աճ: Ընդ որում՝ երկրորդ եռամսյակից սկսած՝ առավելագույն մեծությունները գրանցվել են ժամը 11:00 - 12:00-ի ընթացքում, ինչը դրական տեղաշարժ է՝ օրվա վերջում վճարումների կուտակման հետ կապված հնարավոր խնդիրներից զերծ մնալու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, 2011 թ. համեմատ նկատելի նվազել են ժամում 2500 սահմանաչափը գերազանցող դեպքերը՝ կազմելով միջինում աշխատանքային ժամերի 16.6%-ը (2011 թ. դեկտեմբերին՝ 43%): Նվազել է նաև ժամում 3500 - 4300 վճարումների տեսակարար կշիռը:

Որոշակի ավելացել է նաև պիկ ժամերին կատարված վճարումների տեսակարար կշիռը տվյալ օրվա վճարումների ծավալում:


Թողունակության վերոնշյալ ցուցանիշները և իրականացված նպատակային վերլուծության⁴³ արդյունքները վկայում են, որ ժամում առավելագույն մեծությունները պայմանավորված են հիմնականում որոշակի օրերին մի քանի բանկի ցուցաբերած ակտիվությամբ: Հաշվի առնելով, որ նման դեպքերն ընդհանուր վճարումներում դեռևս մեծ կշիռ չունեն, և այդ ժամանակահատվածում փաստացի միջադեպեր չեն գրանցվել, թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

Համակարգի գործառնական հասանելիությունը մասնակից բանկերում


2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում Կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի անխափան աշխատանքի վրա ազդեցություն է ունեցել ընդամենը 1՝ որոշ չափով

⁴³ Վերլուծությունն իրականացվել է ժամում առավելագույն վճարումների (ըստ յուրաքանչյուր ամսվա) բնույթի և վճարող մասնակիցների վարքագծի բացահայտման համար:

2012 թ. միջին եռամսյակային և 2011, 2010 թթ. միջին տարեկան վճարումների ծավալի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների




2012 թ. միջին եռամսյակային և 2011, 2010 թթ. միջին տարեկան վճարումների քանակի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշի դիմամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամերում



— կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամերում


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումների դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Պիկ ժամերին կատարված վճարումների տեսակարար կշիռները տվյալ օրվա վճարումներում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

նշանակալի (30 րոպե և ավելի տևողությամբ) միջադեպ, որի պատճառ է հանդիսացել CBANet ցանցի մոտ 45 րոպե տևողությամբ խափանումը: Միջադեպը գրանցվել է ոչ պիկ ժամին և համակարգի թողունակության բարձր շեմի շնորհիվ խնդիրներ չի ստեղծել համակարգի բնականոն գործունեության համար՝ էական ազդեցություն չթողնելով համակարգի գործառնական հասանելիության վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ԷՎՀ-ի գործառնական հասանելիությունը կազմել է 99.8%, ինչը, ըստ միջազգային չափանիշների, բարձր ցուցանիշ է⁴⁴:

Այսպիսով, ԷՎՀ-ի հասանելիության մակարդակի գնահատումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ համակարգի կառուցվածքը և պահուստային արարողակարգերն ավելի քան բավարար են համակարգային ռիսկերից խուսափելու համար:

CBANet ցանցի հասանելիությունը

2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում CBANet ցանցի հանգույցների խափանումներ չեն եղել, որի արդյունքում ցանցի բոլոր հանգույցների գործառնական և օրացուցային հասանելիությունը կազմել է 100%:

Ցանցի խափանումներ չեն գրանցվել նաև ՀՀ մարզերում և Երևանում:

Հաշվետու ժամանակաշրջանում գլխամասային բաժանորդների աշխատանքի խափանումներ նույնպես չեն գրանցվել. և՛ գործառնական, և՛ օրացուցային հասանելիությունը կազմել է 100%՝ պայմանավորված առցանց պահուստային կապի առկայությամբ:

Ընդհանուր առմամբ կարելի է գնահատել, որ CBANet միջբանկային համակարգչային ցանցի տեխնիկաժրագրային միջավայրը և պահուստային միջոցները ապահովում են ԷՎՀ համակարգի կայուն աշխատանքը:

5.2. ԱՎԱՆՂՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

Ավանդների երաշխավորման համակարգը երկրի ֆինանսական համակարգի կայունությունն ու զարգացումն ապահովող կարևոր բաղադրիչներից է: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) առաքելությունն է՝ ապահովել ավանդատուների շահերի պաշտպանությունը, նպաստել ՀՀ բանկային համակարգի հուսալիության, բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը՝ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

2012 թ. առաջին կիսամյակում պահպանվել է ֆիզիկական անձանց բանկային ավանդների և երաշխավորված ավանդների աճի՝ նախորդ ժամանակահատվածներում ձևավորված միտումը:

2012 թ. առաջին կիսամյակի վերջին, 2011 թ. երկրորդ կիսամյակի վերջի համեմատությամբ, ֆիզիկական անձանց բանկային ավանդների գումարն ավելացել է շուրջ 16%-ով, իսկ երաշխա-

⁴⁴ Դանիայի Ազգային բանկի 2008 թ. ֆինանսական կայունության հաշվետվության մեջ նշվում է, որ համակարգային նշանակություն ունեցող RTGS համակարգերի համար ESCB-ի կողմից սահմանված չափանիշների համաձայն՝ գործառնական հասանելիությունը պետք է շատ բարձր լինի. օրինակ՝ TARGET-ի գործառնական հասանելիությունը 99.65 % էր, ինչը լավ ցուցանիշ է համարվում:

վորված ավանդների գումարը՝ 11.6%-ով: 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվն ավելացել է 7.16%-ով և կազմել է 1262630 (նշված հաշվարկում ներառված չեն ՎՏԲ - Հայաստան բանկ ՓԲԸ-ում հաշվառվող՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ավանդատուները): ՀՀ բանկային համակարգում ավանդատուների գերակշիռ մասը միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուներն են: 2012 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուների կշիռն ավանդատուների ընդհանուր թվի մեջ կազմել է 83.09%, իսկ միայն արտարժույթով ավանդ ունեցող ավանդատուների կշիռը՝ 6.95%: Հիմնադրամի գնահատումների համաձայն՝ ավանդատուների շուրջ 98%-ը երաշխավորված ավանդի չափը չգերազանցող ավանդ ունեցող ավանդատուներ են:

5.3. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

ՀՀ ԿԲ վարկային ռեգիստր


2003 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկում գործում է Վարկային ռեգիստրը, որը հավաքագրում է վարկառուների վերաբերյալ տվյալներ, ամփոփում և տրամադրում առևտրային բանկերին, վարկային կազմակերպություններին և վարկառուներին: Վարկային ռեգիստրում հաշվառվում են 1.5 մլն դրամը գերազանցող և մինչև 1.5 մլն դրամ, սակայն ժամկետում չմարված և դասակարգված վարկերը: 2012 առաջին կիսամյակի վերջի դրությամբ ԿԲ վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվը եղել է 1196117, որից 1099894-ը ֆիզիկական անձանց, իսկ 96223-ը՝ իրավաբանական անձանց վերաբերյալ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ Վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվն ավելացել է 218700-ով:

2012 թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ Վարկային ռեգիստրում առկա է եղել 205708 գործող և 990409 մարված վարկերի վերաբերյալ տեղեկատվություն:


Նախորդ տարվա առաջին կիսամյակում տրամադրվել էր 65183 վարկ, իսկ այս տարվա առաջին կիսամյակում՝ 80824, ինչը վկայում է վարկային ակտիվության բարձրացման մասին: Հաշվառվող վարկերի քանակի մեծացմանը զուգընթաց, փոխվել են նաև մուտքագրվող տեղեկատվության ծավալները: 2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում տեղեկատվության մուտքը վարկային ռեգիստր կազմել է օրական միջինը 9000 գրառում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 5.5%-ով): Արդյունքում ավելի ամբողջական է դարձել վարկառուների վարկարժանության որոշման և վերահսկողական նպատակներով օգտագործվող տեղեկատվությունը՝ հնարավորություն ընձեռելով ավելի արդյունավետ գնահատելու վարկատուների վարկային ռիսկը, խուսափելու անպարտաճանաչ վարկառուներից:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գերակշիռ մասը ավտոմատացրել է Վարկային ռեգիստրին տվյալների տրամադրման գործընթացը, ինչի արդյունքում մեծացել է համակարգի արագագործությունը: ԿԲ «Վարկային ռեգիստր» ծրագրային համակարգի կատարելագործման արդյունքում վարկային պատմությունները բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրվում են հարցումը ստանալուց առավելագույնը մեկ օրվա ընթացքում: Փոքրացել է նաև վար-


2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակը



2011 - 2012 թթ. առաջին կիսամյակների ընթացքում տրամադրված վարկերի քանակը



2009 - 2012 թթ. առաջին կիսամյակների ընթացքում ստացված հայտերի քանակ



կային ռեզիստոր ներկայացվող տվյալների մեջ սխալների տեսակարար կշիռը՝ հասնելով նվազագույնի:

Ինչպես երևում է գծապատկերից, 2012 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, հայտերի քանակը նվազել է, ինչը պայմանավորած է «ԱՔՌԱ» վարկային բյուրոյի առկայությամբ: Վարկային պատմության ստուգման միջոցով հաճախորդի վարկարժանության գնահատումը կրճատում է վարկավորման վրա ծախսվող ժամանակը և հնարավորություն է տալիս նվազեցնելու վարկային ռիսկը՝ խուսափելով անպարտաճանաչ վարկառուներից: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեծ մասի համար շարունակաբար մեծանում է վարկային պատմության կարևորությունը՝ հատկապես նոր հաճախորդների վարկավորման դեպքում:

Վարկային ռեզիստորի գործունեության արդյունքում 2012 թ. բարձրացել է վարկառուների գործարար կարգապահությունը, նվազել են վարկերի մասնակի մարումների ուշացումները: Վերջինս հաճախորդների կողմից իրենց վարկային պատմության կարևորության գիտակցման արդյունք է:

Վարկային ռեզիստորում հաշվառվող տեղեկատվության ծավալների, ինչպես նաև տեղեկատվության օգտագործման ցուցանիշների՝ 2012 թվականի առաջին կիսամյակում արձանագրված աճը, ըստ ամենայնի կշարունակվի նաև 2012 թ. երկրորդ կիսամյակում: Ելնելով առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքներից՝ կարելի է եզրակացնել, որ Վարկային ռեզիստորին տեղեկատվություն տրամադրող բոլոր վարկատուները 2012 թ. վերջին կավտոմատացնեն տեղեկատվության տրամադրումը վարկային ռեզիստորին:

Կշարունակվեն նաև մեթոդաբանական փոփոխությունները՝ բացահայտվող սխալների քանակի նվազեցման և գործունեության օպերատիվության բարձրացման նպատակով:

ԱՔՌԱ վարկային բյուրո

2012 թ. 1-ին կիսամյակում ԱՔՌԱ վարկային բյուրոյի տվյալների բազայում գրանցված հաճախորդների թիվը 2011թ. դեկտեմբերի համեմատ ավելացել է 7.9%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1289000 հաճախորդ, որոնց 97.2%-ը ֆիզիկական անձինք են:


Տվյալների բազայում առկա վարկերի քանակը 2012 թ. հունիսին, 2011թ. դեկտեմբերի համեմատ, ավելացել է 10%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 6153000 հատ:

Յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ կարող է վարկային բյուրոյից ստանալ իր վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն: Իր հաճախորդի, գործընկերոջ վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար իրավաբանական անձը պետք է վարկային բյուրոյի հետ կնքի ծառայությունների մատուցման պայմանագիր և ստանա վարկային պատմության սուբյեկտի գրավոր համաձայնությունը:

Վարկային բյուրոն վարկային զեկույցներ սկսել է տրամադրել 2007 թվականի ապրիլից: 2012 թ. 1-ին կիսամյակի ընթացքում տրամադրած վարկային զեկույցների քանակը 2011 թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 74%-ով:

2011 թ. Վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև կոմունալ-կենցաղային ծառայություններ մատուցող ծառայու-

ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը (հազար հատ)



Աղբյուրը՝ ԱՔՌԱ վարկային բյուրո:

թյուններից՝ *Երևանցուր, Հայջրմուղկոյուղի և Հայռուսգազարդ* ընկերություններից: ԱՔՌԱ տվյալների բազայում տեղեկատվություն է ներառվում սահմանված ժամկետում չվճարումների վերաբերյալ: Բանակցություններ են վարվում հեռահաղորդակցական ծառայություններ մատուցող՝ *Արմենտել, Վիվասել, Օրանժ* ընկերությունների հետ՝ տեղեկատվության շրջանառության կազմակերպման վերաբերյալ:

ԱՔՌԱ վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև հանրային տվյալների բազաներից՝ ՀՀ ոստիկանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հանրային բազաներից: Բանակցություններ են վարվում նաև սահմանված ժամկետում չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվություն ստանալու համար:


ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից 2011 թ. ներդրվել է *ԱՔՌԱ Աքոր* ծառայությունը: ԱՔՌԱ Աքոր վարկային սթրիմգը վարկային ռիսկի վիճակագրական և գործառնական մոդելավորման տարբերակ է, որը ենթադրում է վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականի ներկայացում: Վարկային սթրիմգը գերազանցապես հենվում է վիճակագրական մեթոդների վրա և հնարավորինս բացառում է փորձագիտական գնահատումների կիրառումը՝ վարկարժանության թվային գնահատական ստանալու գործընթացում:

2011 թ. ներդրվել է նաև Վարկառուի մշտադիտարկում, ինչը հնարավորություն է տալիս բանկին կամ վարկային կազմակերպությանը անմիջապես տեղեկանալու իր ընտրած վարկառուների կողմից այլ հաստատություններում վարկային կամ ֆինանսական պարտավորության կատարման, վարկառուների վարկային պատմության մեջ կատարվող, այդ թվում՝ նույնականացման տվյալների (օրինակ՝ հասցե, կազմակերպության տնօրեն և այլն) ցանկացած փոփոխության վերաբերյալ:


Ներդրվել է նաև *Առցանց հնքնահարցում* ծառայությունը, որը հնարավորություն է տալիս ցանկացած վայրից, ինտերնետի միջոցով, գրանցվելով ԱՔՌԱ պորտալում, առցանց ստանալու վարկային զեկույցներ, որի համար վճարումը կատարվում է նույնպես առցանց՝ «ԱրՔ» վիրտուալ կամ «Մաստերքարտի» միջոցով:

Վարկային բյուրոյի կողմից տնօրինվող տեղեկատվության պահպանման և այլ անձանց կողմից անօրինական օգտագործումը բացառելու նպատակով մշակվել է տվյալների բազայի պահպանման բազմաստիճան կոդավորված համակարգ: Համակարգում գրանցվում են բոլոր գործողությունները, կիրառվում է համակարգի մշտադիտարկում՝ կասկածելի և չարտոնված գործողությունները բացառելու, կանխելու համար:

ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը (հազար հատ)



ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը



Աղբյուրը՝ ԱՔՌԱ վարկային բյուրո:

ԱՍՓՈՓՈՒՄ

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ էլեկտրոնային վճարումների համակարգում վարկային և իրացվելիության ռիսկերը նվազագույնի են հասցված, համակարգի թողունակության մակարդակը բավարար է, և ապահովվում է օրվա ընթացքում վճարումների անընդհատությունը: Համակարգում գործառնական ռիսկեր չեն գրանցվել՝ համակարգի հասանելիությունը պահպանվել է միջազգայնորեն ընդունելի մակարդակի վրա: Պիկ

Ժամը տեղափոխվել է օրվա սկիզբ, ինչը դրական տեղաշարժ է՝ օրվա վերջում վճարումների կուտակման հետ կապված հնարավոր խնդիրներից զերծ մնալու տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, ԷՎՅ գործունեությունը գնահատվում է բավարար, և ֆինանսական կայունության տեսակետից՝ վճարահաշվարկային բնագավառի զարգացումները եղել են կառավարելի շրջանակներում՝ չառաջացնելով խոցելի ռիսկեր:

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

<i>Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների</i>	11
<i>Գործազրկության շարժը զարգացած երկրներում</i>	11
<i>ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի և Եվրոգոտու երկրների ընթացիկ հաշիվները</i>	12
<i>Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը</i>	12
<i>Նավթի («բրենթ» տեսակի) գները</i>	13
<i>Պղնձի գները</i>	13
<i>Սուիբդենի գները</i>	13
<i>Հացահատիկի գները</i>	13
<i>Ոսկու գները</i>	13
<i>Գնաճը մի շարք երկրներում</i>	14
<i>10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը</i>	14
<i>Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը</i>	15
<i>Միջբանկային տոկոսադրույքները</i>	15
<i>ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի և ՄԲ ֆունտ ստեռլինգի նկատմամբ</i>	15
<i>Բորսայական ինդեքսները</i>	16
<i>Նավթի գնի և ՌԴ արտահանման միտումները</i>	16
<i>Ռուսական ռուբլու միջին ամսական փոխարժեքը</i>	17
<i>Վրաստանի ՀՆԱ և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը</i>	18
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը</i>	20
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը</i>	21
<i>ՀՆԱ ծախսային բաղադրիչները</i>	21
<i>Արտաքին պետական պարտքի ծավալը և արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը</i>	22
<i>Սպառողական գների և ներմուծված ապրանքների գների ինդեքսները</i>	22
<i>ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի</i>	23
<i>ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի</i>	23
<i>Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունն ըստ երկրների</i>	23
<i>Ձուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն</i>	24
<i>Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ</i>	24
<i>Տնային տնտեսությունների պարտքի և եկամուտների ցուցանիշներ</i>	25
<i>Միջին անվանական աշխատավարձ</i>	25
<i>Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը</i>	25
<i>Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը</i>	26
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային և սպառողական վարկային պորտֆելը</i>	26
<i>ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը</i>	26
<i>Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի միջին կշռված տոկոսադրույքները</i>	27
<i>Բնակարանների միջին գների ինդեքսը</i>	27
<i>Անշարժ գույքի գործառնությունների քանակի ինդեքսը</i>	27
<i>Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը</i>	28

<i>Բնակարանների առուվաճառքի և անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի քանակի բաշխվածությունը ...</i>	28
<i>Ռեպո գործառնությունների ծավալները և տոկոսադրույքների մակարդակները</i>	30
<i>Վարկային ռեսուրսների հարթակում իրականացված գործարքների ծավալը և միջին կշռված տոկոսադրույքը</i>	30
<i>ԿԲ-ում առևտրային բանկերի` ԳԳ դրամով թրթակցային հաշիվների և ԳԳ դրամով պահուստավորման ենթակա միջոցների հարաբերակցությունը</i>	30
<i>ԳԳ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերը</i>	31
<i>Պետական գանձապետական կարծաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները</i>	31
<i>Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները</i>	31
<i>ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը</i>	32
<i>Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները</i>	32
<i>Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները</i>	32
<i>ԳԳ արժուքային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները</i>	33
<i>Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների</i>	34
<i>Բանկային համակարգի կայունության քարտեզը</i>	34
<i>Ֆինանսական միջնորդության մակարդակը</i>	35
<i>Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ԳԳ բանկային համակարգի կապիտալում</i>	35
<i>4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ընդհանուր բանկային համակարգում</i>	35
<i>Վարկային ներդրումների տարեկան աճը</i>	36
<i>Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները</i>	36
<i>Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում</i>	36
<i>Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում</i>	37
<i>Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի</i>	37
<i>Վարկերի կորուստների դինամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը</i>	37
<i>Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ</i>	38
<i>ԳԳ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը</i>	38
<i>Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին` ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների</i>	38
<i>Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին</i>	39
<i>Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող բանկերի քանակը</i>	39
<i>Բանկային համակարգի` արտարժույթի առք ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները</i>	40
<i>Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները</i>	41
<i>Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը</i>	42
<i>Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը</i>	42
<i>Ընդհանուր կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի (30.06.2012 թ. դրությամբ)</i>	42
<i>Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշներ</i>	43
<i>Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՅ երկրներում</i>	43
<i>Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՅ երկրներում</i>	43
<i>Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը</i>	43

<i>Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ծյուղերի</i>	44
<i>Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ</i>	45
<i>ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները</i>	46
<i>Ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2011 թ.)</i>	46
<i>Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները</i>	46
<i>Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ</i>	47
<i>Ներդրումային ընկերությունների ռիսկով կշռված ակտիվներում ռիսկերի կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ</i>	49
<i>Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը</i>	52
<i>Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)</i>	52
<i>2012 թ. միջին եռամսյակային և 2010-2011 թթ. միջին տարեկան վճարումների ծավալի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների</i>	53
<i>2012 թ. միջին եռամսյակային և 2010-2011 թթ. միջին տարեկան վճարումների քանակի ժամային բաշխումն ըստ օրվա ընթացքում դրանց տեսակարար կշիռների</i>	53
<i>Վճարում/ժամ առավելագույն քանակը` ըստ ամիսների</i>	53
<i>2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշի դինամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամերում</i>	53
<i>ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումների դինամիկան</i>	54
<i>Պիկ ժամերին կատարված վճարումների տեսակարար կշիռները տվյալ օրվա վճարումներում</i>	54
<i>2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակը</i>	55
<i>2011 - 2012 թթ. առաջին կիսամյակների ընթացքում տրամադրված վարկերի քանակը</i>	55
<i>2009 - 2012 թթ. առաջին կիսամյակների ընթացքում ստացված հայտերի քանակը</i>	55
<i>ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը</i>	56
<i>ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը</i>	57
<i>ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը</i>	57

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2012 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատականի վերանայումները ԱՄՆ կողմից	10
ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող որակական ցուցանիշներ	22
Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների	28
30.06.2012 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար	31
30.06.12 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար	31
Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից	35
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	37
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար	38
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	39
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար	40
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	40
Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	41
Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ	42
Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները	44
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	45
Վճարունակության գնահատման սթրես-սցենար	47
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	47
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ	48
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար	48

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱՏԵ	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԿԲ	Եվրոպական կենտրոնական բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՀԸ	Ազգային հիփոթեքային ընկերություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ԱՊՊԱ	Ավտոտրանսպորտային պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
ՀԿԴ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
ՊՊ	Պետական պարտատոմսեր
ՊԿՊ	Պետական կարծաժամկետ պարտատոմսեր
ԷՎՀ	Էլեկտրոնային վճարումների համակարգ
ՊԱՀՀ	Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

